

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### Ցեղասպանութենէն 106 Տարի Ետք Թուրքիոյ Վարքագիծը Կը Մնայ Անփոփոխ



106 տարիներ առաջ՝ այս օրերուն Հայ ժողովուրդը ապրեցաւ իր դարերու պատմութեան ամենէն սարսափելի ժամանակաշրջանը, երբ Օսմանեան Թուրքիան ծրագրեց ու գործադրութեան դրաւ իր հայաջինջ քաղաքականութիւնը՝ այդպիսով լուծելու համար Հայկական հարցը: Վայրագութիւններուն զոհ դարձան իր հայրենի հողին վրայ ապրող մօտ երկու միլիոն հայազգի բնակչութիւնը, իսկ մնացեալները տեղահան եղան իրենց պապեանական օճախէն՝ ապաստան գտնալով այլ երկիրներու մէջ, ուր կազմեցին կորիզը այսօրուայ հայկական սփիւռքին:

Եղեռնի արհաւիրքէն հարիւր ու ավելի տարիներ ետք մեր ժողովուրդը տակաւին չէ գտած իր ներքին անդորրութիւնը ու կը շարունակէ ապրիլ պատմական այդ ճնշող իրականութեան ծանր բեռին տակ, միաժամանակ յիշելով որ իր ուներուն կ'իյնայ նահատակներու կտակը սերունդէ-սերունդ փոխանցելու սրբազան պարտականութիւնը:

Հայկական Ցեղասպանութեան զոհերու տարելիցը յարգելով կու գանք աշխարհին յիշեցնելու թէ հայութեան դէմ գործուած սպանող ու տեղահանութիւնը ուղղուած էր ամբողջ մարդկութեան դէմ: Այդ արարքներու պատասխանատուն՝ թրքական պետութիւնը մնալով անպատիժ դուռը լայն բացաւ այլ ցեղասպանութիւններու առջեւ, որոնք կրկնուեցան անցնող տասնամեակներուն՝ աշխարհի տարբեր ծայրամասերէն ներս:

Թրքական պատասխանատուութեան կողքին մեղքի իր բաժին ունին նաեւ միջազգային հանրութիւնը եւ յատկապէս յառաջադէմ մեծ պետութիւնները: Անոնցմէ ոմանք ուշացումով եկան ճանչնալու Ցեղասպանութեան իրողութիւնը, իսկ ուրիշներ մինչեւ օրս կը զլանան առնել այդ քայլը, Թուրքիոյ հետ յարաբերութիւնները վեր դասելով իրենց իսկ դաւանած համամարդկային արժէքներէն:

Այս օրերուն Ամերիկահայութիւնը մեծ ակնկալութեամբ կը սպասէ Սպիտակ Տունէն «Ճերմակ ծուխի» երեսունին եւ կը յուսայ, որ Միացեալ Նահանգներու ներկայիս Նախագահը հետեւելով Ծերակոյտի եւ Ներկայացուցիչներու Տան օրինակին ու հաւատարիմ մնալով իր խոստումին, Ապրիլ 24-ի իր յայտարարութեան մէջ Հայութեան դէմ գործուած զանգուածային կոտորածները կը կոչէ իրենց իսկական անունով՝ որպէս Ցեղասպանութիւն:

Այսօրուայ Թրքական կառավարութեան ժառանգորդն է իր նախորդներու գործած ոճիրներուն: Սակայն ան ոչ միայն կը շարունակէ իր ժխտողական կեցուածքը, այլ կը վերահաստատէ իր թշնամական վարքագիծը՝ Հայաստանը նկատելով խոչընդոտ իր ծաւալապաշտական ու բանթուրքական ծրագիրներու իրականացման ճանապարհին: Արցախեան վերջին պատերազմը մէկ օղակն էր այդ հակահայ քաղաքականութեան, որ ի գործ դրուեցաւ Թուրքիոյ դաշնակից Ատրպէյճանի հետ ձեռք-ձեռքի տուած:

Մենք չենք ակնկալել մօտ ապագային որեւէ եական փոփոխութիւն պաշտօնական Թուրքիոյ հակահայ վարքագիծին մէջ ու խիստ վերապահութեամբ կը մօտենանք անկէ եկող ազդակներուն նկատմամբ:

Հայութիւնը ներկայիս կը դիմագրաւէ բազում մարտահրաւերներ: Մեր պայքարը երկարաշունչ է: Մեր թշնամիները դաւադիր են: Մեր առջեւ կայ մէկ ճանապարհ՝ Հայաստանի Հանրապետութեան հզօրացումը եւ մեր ժողովուրդի միասնականութիւնը՝ հաւաքական ներուժի առաւելագոյն օգտագործմամբ: Այդ կը պահանջեն մեր հին ու նոր նահատակները ու այդ է Հայկական Ցեղասպանութեան 106-րդ Տարելիցի պատգամը:

### Երբ Ատրպէյճան Յետախուզական Արբանեակ Կը Գնէր, Հայաստանի Իշխանութիւնները՝ Յունական Կղզիներու Վրայ Հողեր. Փաշինեան

«Երբ Ատրպէյճանը հետախուզական արբանեակ էր գնում, Հայաստանի իշխանութիւնները գնում էին հողամասեր՝ յունական կղզիներում», Ազգային ժողովէն ներս չալտարարեց վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան: Ան խորհրդարան եկած էր՝ ներկայացնելու կառավարութեան ծրագրի 2020 թուականի կատարման ընթացքի եւ արդիւնքներու մասին զեկոյցը:

Ներկայացնելով 2017 թուականին կատարուած վերլուծութիւն մը, ֆինանսաւորուած այն ժամանակ գործող իշխանութիւններու կողմէն՝ Փաշինեան նշեց՝ քննադատական ենթակառուցուածներու զարգացման տեսակարար կշիռով Հայաստանը պայմանական միաւորով 10-1 հաշուով գիշած է Ատրպէյճանին: Կրկին վկայակոչելով այդ վերլուծութիւնը՝ վարչապետը նշեց՝ Հայաստանի ռազմարդիւնաբերական համակարգը սկսած է ձեւաւորուիլ 2016 թուականի Ապրիլին, Ատր-

պէյճանէն 11 տարի ուշացումով:

«2017 թուականին Ատրպէյճանն ունէր երկու արբանեակ, որոնցից մէկը՝ հետախուզական, որը գնել էր: Այո՛, Ատրպէյճանը հետախուզական արբանեակ էր գնում, իսկ Հայաստանի իշխանութիւնները գնում էին հողամասեր յունական կղզիներում, եւրոպաներում, այնտեղ, որտեղ հնարաւոր էր: Ուրեմն պէտք է արձանագրել, որ նրանք տանուլ են տուել պետութեան հաստատութեան կապացման հարցում՝ պետութիւնը վերածելով մի մաֆիոզ կառույցի, որը քամում է Հայաստանի կենսական միջոցները, ու էդ մաֆիոզ կառույցները մինչեւ հօր իրենց շոշափուկներն ունեն ամենուր՝ սկսած դատական համակարգից, վերջացրած, ցաւօք սրտի, մինչեւ անգամ Զինուած Ուժերում», - չալտարարեց Փաշինեան՝ ընդգծելով. -

Շար.ը էջ 5

### Հայկական Ցեղասպանութեան Տարելիցի Ոգեկոչման Յայտագիրը

Հայկական Ցեղասպանութեան Յանձնախումբը ու անոր մաս կազմող անդամ կազմակերպութիւնները միասնաբար պատրաստած են ոգեկոչման ծրագիր, որ պիտի հեռարձակուի տեղական հայկական հեռատեսիլի ալիքներով, ինչպէս նաեւ մի քանի ժամ տեւողութեամբ ուղղիղ հաղորդում պիտի կատարուի ընկերային ցանցերով՝ Ապրիլի 24, 2021-ի կէսօրուայ ժամը 12-էն սկսեալ:

Ծրագրի ընթացքին ելոյթ պիտի ունենան Յանձնախումբին մաս կազմող համայնքային կազմակերպութիւններու ներկայացուցիչները, շարք մը յայտնի պետական պաշտօնեաներ, հոգեւորականներ, ինչպէս նաեւ պիտի ներկայացուին տեղեկատուական հարցաթղթեր եւ քննարկումներ՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ յանցագործութեան հատուցման վերաբերեալ:

Բացի այդ, ժողովուրդը հնարաւորութիւն պիտի ունենայ լսելու մեր համայնքի անդամներէն, յայտնի անձնաւորութիւններէ, ինչպէս նաեւ պիտի ներկայացուին մշակութային հատուածներ՝ յարգելու համար յիշատակը 20-րդ դարու առաջին Ցեղասպանութեան զոհերուն:

Ուղղիղ հեռարձակման զուգահեռ, Հայկական Ցեղասպանութեան Յանձնախումբը իր մասնակցութիւնը պիտի բերէ UACLA-ի կողմէ ամէն տարի կազմակերպուող Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանի միջոցառումին: Առաւօտեան ժամը 10-ին պիտի կայանայ եկեղեցական արարողութիւն, որու ընթացքին հայ հոգեւորականներու եւ տարբեր դաւանանքի ներկայացուցիչներու մասնակցութեամբ պիտի կատարուի միացեալ աղօթք: Այնուհետեւ, ժողովուրդը առիթ պիտի ունենայ ծաղիկներ գետեղելու Նահատակներու Յուշարձանին:

Ցեղասպանութեան Յանձնախումբ իր ուշադրութեան կեդրոնին պիտի պահէ նաեւ Արցախեան վերջին պատերազմի ընթացքին մեր հերոսներու քաջագործութիւններն ու զոհաբերումը՝ վեր առնելով այն իրողութիւնը որ, ցեղասպանութեան ժխտումը կը նշանակէ ցեղասպանութեան կրկնութիւն:

Վերջին մէկ տարուայ ընթացքին Հայ ազգը դիմագրաւեց բազում դժուարութիւններ, սակայն կ'ուզենք ընդգծել մեր ժողովրդի եւ մեր համայնքներու միասնութիւնը, զօրութիւնը եւ դիմադրողականութիւնը՝ շնորհիւ մեր համագործակցութեան: Այս ոգով, Յանձնախումբը պատրաստած է երկու միլիոն Ամերիկահայերու անունով նամակ՝ յորդորելով Նախագահ Պայտընին ճանչնալու Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը:

Հայկական Ցեղասպանութեան Յանձնախումբ

# ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Ինչ է Կատարուում Ալիեւի Յետ

### ԷՄՍԱ ԳԱԲՐԻԵԼԵԱՆ

Կան ատրպէյճանցիներ, որոնք Ատրպէյճանի նախագահին մեղադրում են «կապիտուլյացիոն» փաստաթուղթ ստորագրելու մէջ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի մօտ, վստահաբար, բաւական լուրջ անհանգստութիւններ կան: Ատրպէյճանցի փորձագէտների շրջանում, որոնք բնակուում են երկրից դուրս, աւելի են խորանում դժգոհութիւնները Նոյեմբերի 10-ին հրապարակուած յայտարարութեան վերաբերեալ: Որոշները նրան մեղադրում են ոչ աւել ոչ պակաս՝ «կապիտուլյացիոն» փաստաթուղթ ստորագրելու մէջ, հիմնաւորմամբ, թէ «հիմա էլ ռուսներն են օկուպացրել Լեռնային Ղարաբաղը», իսկ Ալիեւը դարձել է մարիոնետ՝ միաժամանակ թէ՛ Մոսկուայի, թէ՛ Անքարայի ձեռքում:

Ու հիմա Ալիեւը նպատակ է հետապնդում ցրել այսօրինակ կարծիքները: Ատրպէյճանում որոշակի խաւ էլ կայ, որը 2016թ. ապրիլեան պատերազմից յետոյ ատրպէյճանական բանակի ներսում իրականացրած բռնաճնշումների, սարսափելի վայրագութիւնների առիթով իրենց դժգոհութիւններն ունեն: Այդ մասին բարձրաձայնում են արտերկրում գտնուող ատրպէյճանցի փորձագէտները, նախկին իրաւապաշտպանները, վստահ լինելով, որ այդ փաստերի հիմքերով վաղ թէ ուշ Ալիեւը պատասխան է տալու, նոյնիսկ համարում են, որ իշխանութիւն է կորցնելու:

Անցեալ աշնանը Լեռնային Ղարաբաղում պատերազմի աւարտից ու եռակողմ յայտարարութեան ստորագրումից յետոյ Ալիեւի գերակաութեան մէջ իսկապէս ինչ-որ արհեստական երանգներ կան: Նրա ամէն մի ելույթում հնչում են մի կողմից ատրպէյճանական բանակի տարած յաղթանակի ապացոյցները, միւս կողմից՝ նա աչքն է աչք մասին խօսում, որ տպաւորութիւն է, որ ինքն էլ չի հաւատում այդ յաղթանակին, կամ պարտաւորուած է զգում սեփա-

կան հասարակութեանն ապացուցել, որ իրեն են պարտական այդ յաղթանակի համար, այլ ոչ թէ՛ ուրիշներին:

- Ումից է վախենում Ալիեւը, ինչից է այդքան անհանգստացած, ովքե՞ր են նրան ուղղորդողները, ո՞ւմ է նա հաշուետու չեղած պատերազմեան այս փուլում Ապրիլի 13-ին Ատրպէյճանական դիւանագիտական ակադեմիայում «Նոր հայեացք դէպի Հարաւային Կովկաս. գարգացում եւ համագործակցութիւն հետկոնֆլիկտային շրջանում» համաժողովում Ալիեւի ելույթի որոշ դրուժիւններ գալիս են ապացուցելու, որ Ալիեւի նկատմամբ իսկապէս ճնշումներ են գործադրուում, ընդ որում՝ նրա մտքերը միմեանց սկսել են հակասել: Արդէն մի քանի ամիս Հայաստանի ուղղութեամբ տարածքային պահանջներ ներկայացնող Ալիեւն ահա յայտարարել է, թէ հնարաւոր է հաշտութեան պայմանագիր կնքուել Հայաստանի հետ: «Մենք կարծում ենք, որ հակամարտութեան էջը փակուած է: Ես արդէն մի քանի անգամ խօսել եմ Հայաստանի հետ հաշտութեան պայմանագրի հնարաւորութեան մասին»: Միաժամանակ նա արձանագրում է, թէ իրավիճակը տարածաշրջանում նախկինի պէս շարունակուած է մնալ փերուս. «Իրավիճակը պատերազմից յետոյ նախկինի պէս մնում է փերուս: Կրակի դադարեցման ռեժիմը պահպանուած է, բայց չնայած դրան, մեր առջեւ ծառայած են չեղարկուած պարզագումների բազմաթիւ հարցեր»: Նա նաեւ կոչ է արել Հայաստանի քաղաքացիական հասարակութեանը համագործակցել տարածաշրջանում խաղաղ շինարարութեան ոլորտում: «Միեւնոյն ժամանակ, մենք պէտք է նայենք դէպի ապագան: Այստեղ մենք ակնկալում ենք աւելի շատ փոխազդեցութիւն Հայաստանի քաղաքացիական հասարակութիւնից Հակամարտութիւնը լուծուած է, եւ մենք պէտք է նայենք ապագային»: Մի կողմից Ալիեւը արձանագրում է, որ պատրաստ է ստորագրել Ղարաբաղի վերաբերեալ խաղա-

ղութեան համաձայնագիր, սակայն անմիջապէս մատնանշում է դրան հնարինութեան «մեղաւորին», թէ՛ պատասխան քայլեր չի տեսնում հայկական կողմից ու շեշտում է, թէ «մնում են բաւական բաց հարցեր ԼՂ խնդրի կարգաւորման վերաբերեալ», ընդ որում՝ արձանագրում է, որ՝ «հայկական բանակի արդիականացումը մտահոգիչ է»:

Ապա, նա մէկ արձանագրում է, որ Ատրպէյճանը տարածքային պահանջներ չունի Հայաստանի նկատմամբ, սակայն ատրպէյճանցի երիտասարդներին խորհուրդ է տալիս «յիշել պատմութիւնը» ու սկսուած է պատմութեան «գասընթաց» հետեւեալ շեշտադրումներով. «Զանգեզուրը հինաւուրց ատրպէյճանական տարածք է» եւ «Հայաստանին է յանձնուել 1920թ.»։ Նրա խօսքով՝ ատրպէյճանական է նաեւ Սեւանայ լճի տարածքը եւ անգամ Երեւանը. «Բայց դա չի նշանակում, որ մենք որեւէ տարածքային պահանջներ ունենք: Այո՛, ես անգամ յայտարարել եմ, որ մենք կը վերադառնանք այնտեղ: Այո՛, ես ասել եմ դա: Բայց ես չեմ ասել, որ կը վերադառնանք տանկերով»: Ապա՝ բացատրում է. «Եթէ մենք վերադարձնում ենք Զանգեզուրի միջանցքը, եթէ օգտագործում ենք այդ ճանապարհը, կարծում եմ, որ կը գայ ժամանակը, երբ կը վերադառնանք նաեւ Երեւան: Մենք միշտ կը յիշենք մեր պատմութիւնը: Բայց մենք տարածքային պահանջ չունենք աշխարհի ոչ մի երկրի, այդ թւում՝ Հայաստանի նկատմամբ»:

Այսինքն, Հայաստանի տարածքային ամբողջականութեան դէմ յաւակնութիւններ ներկայացնող Ալիեւը իբր վերախմբագրում է իր երբեմնի յայտարարութիւնները, ցոյց տալով, թէ նկատի ունի՝ հայերի հետ խաղաղ ապրելու, շփուելու մղումը, այլ ոչ թէ՛ նոր պատերազմը: Իրականում Ալիեւը նպատակ է հետապնդում շատ կարճ ժամանակահատուածում ռուս խաղաղապահների ոչ պետքականութեան վերաբերեալ հիմնաւոր կարծիք ձեւաւորել: Ահա՛ այդ ուղղութեամբ նրա ակնարկը: «Հայաստանի եւ Ատրպէյճա-

նի միջեւ պետական սահմանին՝ թովոլուում, Ղազախում, Աղստաֆում, չկան խաղաղապահներ, եւ ոչինչ տեղի չի ունենում: Ասեմ աւելին, ատրպէյճանցի սահմանապահները կանգնած են Զանգեզուրի հայկական գիւղերից 5 մեթրի վրայ: Եւ ոչինչ տեղի չի ունենում: Հայկական բանակը ոչնչացուած է, այն գոյութիւն չունի»,-ասել է նա՝ որպէս «բարի կամքի դրսեւորում» նշելով, որ Կապան-Երեւան ճանապարհը չի փակուել: «Կաֆան՝ այսպէս են Ատրպէյճանում անուանում հայկական այդ քաղաքը: Այնտեղ նոյնիսկ ցուցանակ կայ՝ «Բարի գալուստ Ատրպէյճան»: Զգիտեմ՝ ինչու է դա նեարդայնացնում հայերին, մենք ընդամենը ցանկանում ենք ողջունել մեր տարածքում, դա մեր տարածքն է, նրանք նոյնիսկ կրակել են այդ ուղղութեամբ: Կարող էինք փակել ճանապարհը, սակայն դա չարեցիք»,- նշել է Ալիեւը: Ալիեւն, այսինքն, ռուսական կողմին հերթական խաթոցի չափաբաժինն է ուղղում, հասկացնելով՝ «դուք մեզ պէտք է չէք, 5 մեթրի վրայ հայերն ու ատրպէյճանցիները հանգիստ կանգնած են դէմ-դիմաց»:

Յիշեցնենք, նախորդ օրը Ատրպէյճանի նախագահը յայտնեց, որ գրուցել է ՌԻ նախագահի հետ, նրա ձեւակերպմամբ՝ Հայաստանի մօտ յայտնուած «Իսկանդեր-Մ» հրթիռների թեմայով, որոնք Ատրպէյճանը պատերազմի աւարտից 5 ամիս անց «յայտնաբերել է Շուշիում»: Ատրպէյճանն ընդդէմ Ռուսաստանի յստակ քայլ է արել, աշխարհին յիշեցնելով, որ «Մ» հրթիռներ ունի միայն ՌԴ-ն, հետեւաբար այստեղ արդէն կարե-

Շար.ը էջ 18

## Արմէն Սարգսեանը Զի Ստորագրել՝ Իմաստը

### ՎԱՅԷ ՄԱԿԱՐԵԱՆ

Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանը չի ստորագրել «Հայաստանի Հանրապետութեան ընտրական օրէնգիրք» սահմանադրական օրէնքում փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին» օրէնքը, Սահմանադրական դատարան էլ չի դիմելու: Նախագահի այս «հիբրիդային» որոշման մասին յայտնում են նախագահի աշխատակազմից:

Թէ ինչու չի ստորագրելու նախագահը օրէնքը եւ ինչու չի դիմելու ՄԴ, դրա վերաբերեալ նախագահականի ուղարկած հաղորդագրութեան մէջ երկար-բարակ բացատրութիւն է ներկայացուած, որից, սակայն, անորոշ է մնում գլխաւոր հարցը՝ եթէ չի ստորագրելու, ինչո՞ւ չի դիմում ՄԴ, իսկ եթէ ՄԴ դիմելու կարիք չկայ, ինչո՞ւ չի ստորագրում: Կարճ ասած՝ չստորագրելու իմաստը:

Յիշեցնենք, որ ԱԺ-ի ընդունած վերջին փոփոխութեամբ՝ այսուհետ ընտրութիւնները կ'անց-

կացուեն փակ համամասնական ցուցակներով՝ առանց տարածքային ցուցակների: Այսինքն՝ ռեյտինգային ընտրակարգը փոխարինուել է համամասնական ընտրակարգով: Եւ նախագահը կարծում է, որ առանց տարածքային ցուցակների կառուցակարգի, համամասնական ընտրակարգը կարող է արդիւնաւէտ լինել կայացած քաղաքական մշակույթի ձեւաւորած խորհրդարանական պետութիւններում, որտեղ կուսակցութիւններն ունեն յստակ ծրագիր, որտեղ հասարակութիւնն ունի հնարաւորութիւն եւ բաւարար ժամանակ՝ ծրագրերին ծանօթանալու, որտեղ ընտրութիւնն իրականացուած է ներկայացուած ծրագրերի հիման վրայ: Մինչդեռ նման փոփոխութիւնը Հայաստանի Հանրապետութիւնում առկայ իրավիճակում կարող է յանգեցնել ոչ թէ կուսակցութիւնների եւ դրանց ծրագրերի միջեւ մրցակցութեան, այլ այս պահին այն կուսակցութիւնը գլխաւորող անցնող անցի միջեւ:

Հաշուի առնելով վերագրեալը՝ հանրապետութեան նախագահը

չի ստորագրելու օրէնքը, բայց եւ չի դիմելու Սահմանադրական դատարան՝ Սահմանադրութեանը դրա համապատասխանութիւնը որոշելու համար:

Իսկ ի՞նչ է սա նշանակում, որ օրէնքը չի՞ մտնի ուժի մէջ: Իհարկէ, ոչ: Այն 21 օր յետոյ կը ստորագրուի ԱԺ նախագահի կողմից եւ աւտոմատ կը մտնի ուժի մէջ: Կամ, ինչպէս սիրում են ասել իմ քայլականները՝ իրաւունքի ուժով:

Ստացուած է՝ հանրապետութեան նախագահը այս օրէնքը առանց ռեալ հիմնաւորման չստորագրելով եւ Սահմանադրական դատարան էլ չուղարկելով՝ պարզապէս հերթական անգամ օղ է կրակել՝ փորձելով այդպիսով իբրեւ թէ ընդդիմանալ օրուայ իշխանութեանը, իսկ իրականում՝ իր վրայից զցել այս օրէնքն ընդունելու կամ մերժելու պատասխանատուութիւնը: Ինչը նշանակում է նպատակ փաշինանական պլանների իրականացմանը:

«ՀՐԱՊԱՐԱԿ»



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
 ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
 USA \$50.00, \$100.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$250.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

**ԼՈՒՐԵՐ**

**Հրապարակուեցաւ Անվտանգութեան Խորհուրդի Նիստի Ձայնագրութիւնը**

Անվտանգութեան Խորհուրդը (ԱՅ) Ապրիլ 20-ին հրապարակեց ձայնագրութիւն, որպէս հաստատում վարչապետի յայտարարութեան, որ Զինուած Ուժերու գլխաւոր շտաբի նախկին պետ՝ Օննիկ Գասպարեան պատերազմի առաջին օրերուն չէ ըսած, թէ դրութիւնը վատ է եւ պէտք է կանգնեցնել ռազմական գործողութիւնները:

«Պարոն վարչապետ, իրադրութիւնը մարտական առումով անփոփոխ է, այսինքն՝ որեւէ առաջընթաց հակառակորդը չի ունեցել: Ամէն դէպքում, զօրքերն իրենց խնդիրը կատարում են, առաւօտեան մի հատ փոքր հակահարուած ձեռնարկեցինք Ձաբրաչիլի ուղղութեամբ, յաջողութիւններ ունեցանք: Իրավիճակը էս ա, շարունակում ենք խնդիրը կատարել եւ շարունակելու ենք կատարել», - ձայնագրութեան մէջ կը գեղեցէ Օննիկ Գասպարեան:

Յիշեցնենք, որ Գասպարեան Նոյեմբեր 17-ին յայտարարած էր, որ պատերազմի 4-րդ օրը Անվտանգութեան Խորհուրդի նիստին ներկայացուցած է հակակապիտալ կողմի կորուստները եւ ստեղծուած իրադրութեան վերաբերեալ Զինուած ուժերու գնահատականը եւ առաջարկած երկու-երեք օրուայ ընթացքին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ պատերազմը կանգնեցնելու համար:

Այս յայտարարութեան մէկ ամիս անց «Ազատութիւն»-ին տուած հարցազրույցի ընթացքին Փաշինեան չէր հերքած, որ Օննիկ Գասպարեան աշպխի առաջարկ ըրած է: Սակայն օրերս վարչապետը խորհրդարանի ամպիոնէն հերքեց Գլխաւոր Շտաբի նախկին պետի յայտարարութիւնը. - «Ուզում եմ այս ամպիոնից պատասխանատու եւ պաշտօնապէս արձանագրել, որ Օննիկ Գասպարեանի Նոյեմբեր 17-ի յայտարարութեան այդ կէտը իրականութեան հետ որեւէ աղբիւս եւ առնչութիւն չունի»:

Յաջորդ օրն ալ Անվտանգութեան Խորհուրդի գրասենեակը Գասպարեանի որոշ պնդումներու վերաբերեալ պարզաբանում ներկայացուց՝ հրապարակելով փաստաթուղթերու գաղտնագրութեան հատուածներ:

Յաջորդ օրն ալ Անվտանգութեան Խորհուրդի գրասենեակը Գասպարեանի որոշ պնդումներու վերաբերեալ պարզաբանում ներկայացուց՝ հրապարակելով փաստաթուղթերու գաղտնագրութեան հատուածներ:

**Մարուքեան Նախկին Իշխանականներուն Առաջարկեց Չմասնակցիլ Ընտրութիւններուն**

ՀՀ ազգային ժողովի ընդդիմադիր՝ «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար՝ Էտմոն Մարուքեան համոզուած է, որ եթէ սպասուող արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն, ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեան, նախկին իշխանութեան միւս ներկայացուցիչները ետ քաշուին, գործող իշխանութիւնը չի հաւաքեր բաւարար ձայներ՝ կրկին իշխանութեան գալու համար: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ Մարուքեան յայտարար տեսակէտ յայտնեց ԱԺ-ի կառավարութեան ծրագրի 2020 թուականի կատարման ընթացքին եւ արդիւնքներու մասին գեղեցիկ քննարկման՝ խմբակցութեան անունով իր ելոյթին:

«Թէ կառավարութեան ներկայացուցիչներ, թէ իշխանական պատգամաւորներ իր լոյսները հետեւեալի մասին էին՝ 30 տարի երկիրը թալանել են, 30 տարի վատ է եղել, դրա համար այսպէս եղաւ, մենք մեղաւոր չենք: 30 տարուայ մէջ 3 տարի դուք էք իշխանութիւն, նշանակում է, որ 30 տարուայ 10 տոկոսը դուք էիք», - ըսաւ Մարուքեան:

Ան նեց իշխանութեան սխալներու, թերացումներու մասին ու ակնցուց. «Նրանք (նախկին իշխանութիւնը-խմբ.) մեղաւոր էին, դրա համար էք այստեղ, նրանք մեղաւոր էին, դրա համար եղել է յեղափոխութիւն: Հիմա ինչքա՞ն պէտք է խօսէք, ասէք, որ նրանք մեղաւոր էին: Բա դուք, բա ձեր 10 տոկոսը»:

Ըստ Մարուքեանի՝ գործող



«Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար Էտմոն Մարուքեան

Իշխանութեան ընտրազանգուածը բաղկացած է 2 հատուածէ: «Մի հատուածը այս իշխանութեան ջատագովն է, դա մօտ 10-15 տոկոս է: Մնացած մասը՝ 15 տոկոս է, թէ 20 տոկոս, նախկին իշխանութեան «հակաձայներն» են, որ գալիս են Նիկոլ Փաշինեանին, որ նրանք չգան: Ես պաշտօնական առաջարկ եմ անում՝ Ռոպերթ Քոչարեանից սկսած, մինչեւ նախկին իշխանութեան միւս ներկայացուցիչներին, մի կողմ քաշուէք, եւ մենք այս մարդկանց կը դարձնենք փոքր ընդդիմադիր խմբակցութիւն՝ իրենց ղեկավար Նիկոլ Փաշինեանով: Մի կողմ քաշուէք, մի կողմ չքաշուեցիք, ձեր դէմ քարոզարշաւով գնալու են վերարտադրման ճանապարհով», - ըսաւ Մարուքեան:

**Ռոպերթ Քոչարեան Եւ Միւսները Արդարացնելու Որոշումը Կը Բողոքարկուի, Յայտարարած Է Փաստաբան Սեդա Սաֆարեան**

Մարտ 1-ի գոհերու հարազատներն ու անոնց շահերը պաշտպանողները գործի բացառապատման էջը փակուած չեն համարեր: Բարձրագոյն դատական խորհուրդի (ԲԴԽ) առջեւ կազմակերպուած բողոքի հաւաքի ընթացքին, փաստաբան Սեդա Սաֆարեան յայտարարեց, որ իրենք պատրաստ են բողոքարկել երկրորդ նախագահ՝ Ռոպերթ Քոչարեանը ու նախկին նախկինները արդարացնելու որոշումը:

Նախկին նախագահն ու անոր նախկին երեք ենթակաները շուրջ մէկ շաբաթ առաջ արդարացուեցան, քանի որ գիրքեք մեղադրող սահմանադրական կարգը տապալելու յօդուածը բարձր դատարանի կողմէն անվաւեր ու հակասահմանադրական ճանաչուած էր:

«Մենք չենք գլանայ, կը բողոքարկենք այս որոշումները, մենք կ'ունենանք եւրոպական դատարաններում վճիռներ տասնեակներ ի եւ հարիւրներ ի հասնող այս գործով, որովհետեւ դատարանը ստիպուած է արձանագրել, որ իրաւական պաշտպանութեան միջոց Հայաստանի Հանրապետութեան տուժողները չեն ունեցել», - ըսաւ Սաֆարեան:

«Մենք չենք չուսահատուել, որ Մարտի 1-ն ամբողջովին փակուելու է, ոչ, ընտրութիւններ են լինելու եւ շատ հանգամանքներ են բացառապատմելու», - ընդգծեց 2008-ի Մարտ 1-ին գոհուած Գոռ Քոյուեանի հայրը՝ Սարգիս Քոյուեան:

Ռոպերթ Քոչարեանի փաստաբանները իրենց պաշտպանեալը արդարացնելէ ետք, անոր դէմ նոր մեղադրանք ներկայացնելը անօրինական կը համարեն: Փաստաբան՝ Գէորգ Գէորգալեան եւս կը կարծէ, որ Քոչարեանին նոյն արարքի համար նոր մեղադրանք



Փաստաբան՝ Սեդա Սաֆարեան

չեն կրնար առաջադրել: Կայ նոյն արարքի համար կրկին դատուելու անթույլատրելիութեան սկզբունք, ըսած է իրաւաբանը: Ըստ Գէորգալեանին, չկայ տարբերութիւն՝ ամբաստանեալը արդարացուած է Սահմանադրական դատարանի որոշմամբ, թէ գործի քննութեամբ: Կայ մէկ փաստ՝ անոր վերաբերուած յօդուածը անորոշ է եւ չի կրնար այդ տեսքով գոյութիւն ունենալ:

Դատախազական համակարգի դէմ կազմակերպուած բողոքի հաւաքին կը մասնակցէր նաեւ Ազգային ժողովի անկախ պատգամաւոր, «Յանուն Հանրապետութեան» կուսակցութեան հիմնադիր՝ Արման Բաբաջանեան: Ան կը պնդէր, թէ՝ 2018-ի յեղափոխութեան 3 տարի յետոյ Մարտ 1-ի գործով այդպէս ալ ամբողջ ճշմարտութիւնը երեւան չելաւ:

«Միայն այդ ճշմարտութեան բացառապատմամբ մենք կարող ենք յստակ, պարզ ճակատով ասել, որ մեր երկրում այլեւս անհնար է նոր Մարտի 1», - ըսաւ Բաբաջանեան:

**«Իմ Քայլը» Կը Քննարկէ Դաշինքով Ընտրութիւններուն Մասնակցելու Հնարաւորութիւնը**

Վարչապետը հրաժարական պիտի տայ Ապրիլի վերջին տասնօրեակին, վարչապետի պաշտօնակատար պիտի ըլլայ Նիկոլ Փաշինեան: Այս մասին ԱԺ ճեպագրույցներուն ժամանակ ըսաւ «Իմ Քայլը» խմբակցութեան պատգամաւոր՝ Արման Եղոյեան:

«Վարչապետն ասել է, որ հրաժարականը կը լինի Ապրիլի վերջին տասնօրեակում, յստակ օրը չեմ կարող ասել: Հրաժարականից յետոյ պաշտօնակատարը լինելու է

վարչապետ Նիկոլ Փաշինեան», - ըսաւ Եղոյեան:

Ըստ Եղոյեանին՝ հիմա կը քննարկուի այն հարցը, որ դաշինքով երթան ընտրութիւններուն, թէ՞ կուսակցութեամբ: Դեռ վերջնական եզրակացութիւն չկայ:

Հարցին, թէ որ ուժերուն հետ կը քննարկուի դաշինք կազմելու հարցը, ան պատասխանեց. «Կան ուժեր, բայց անուններ չեմ կարող հրապարակել»:

**Հայաստանէն 61 Հազար Գաղթականի Պայմանաժամ Տրուած Է Լքել Ռուսաստանը**

Ռուսաստանի գաղթականութեան ոլորտի խստացումներու հետեւանքով ՀՀ քաղաքացիներու ստուար զանգուած մը պիտի առնչուի խնդիրներու: Այս մասին Ապրիլ 20-ին տեղի ունեցած ասուլիսին ըսաւ Գաղթականութեան ծառայութեան հանրային կապերու պատասխանատու՝ Նելլի Դաւթեան:

Յիշեցնենք, որ ըստ ռուսական կողմի հրապարակած տուեալներուն՝ Հայաստանէն 61 հազար անօրինական գաղթական կայ ՌԴ տարածքը: Անոնց ժամանակ տրուած է՝ պատիժներէն զերծ մնալու համար մինչեւ Յունիսի 15-ը լքել երկիրը:

«Փոփոխութիւններ կան, որ արդէն ուժի մէջ են, փոփոխութիւններ կան, որ կը լինեն առաջիկայում: Արդէն իսկ մամուլում եղան տեղեկութիւններ ռուսական կողմից հնչեցրած մի յայտարարութեան մասին, որով ասուած էր, որ անօրինական գաղթականներ իրոշակի զանգուած է կուտակուել իրենց երկրի տարածքում ԱՊՀ (Անկախ Պետութիւններու Համագործակցութիւն) տարածքներից: Եւ ՀՀ քաղաքացի հանդիսացող գաղթականների մասով հնչեցուել է 61 հազար թիւը: Նաեւ զգուշացում ու տեղեկացում կայ, որ արդէն իսկ ՌԴ իշխանութիւնները պատրաստում են պատիժներ, որ պէտք է կիրառուեն այս թիրախ խմբի նկատմամբ: Եւ յորդորում են մինչեւ պատիժների իրականացումը, այն է՝ Յունիսի 15-ը, երկրի տարածքը կամաւոր լքեն անօրինական գաղթականի կարգավիճակում գտնուող անձինք», - ըսաւ Նելլի Դաւթեան:

Դաւթեանի խօսքով՝ բացի անկէ, կան բաւական կոշտ խստացումներ, որոնցմէ մէկը, օրինակ, ուժի մէջ կը մտնէ Յունիս 7-ին:

# ԼՈՒՐԵՐ

## Հայ Գերիններու ու Տեղահանուած Անձերու Հարցը Ներառուեցաւ ԵԽՏԿ Լիագումար Նիստի Օրակարգին Վրայ



Հայ ռազմագերիներու, այլ գերեզմարաններու եւ տեղահանուած անձերու հարցի քննարկումը քուէարկութեամբ ներառուած է Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԽՏԿ) լիագումար նիստի օրակարգին վրայ:

Հայաստանի մարդու իրաւունքներու պաշտպան՝ Արման Թաթոյեան տեղեկացուցած էր, որ Ատրպէյճան պահուող հայ գերիներու հարցով կրկին դիմած է միջազգային կառույցներուն՝ անոնց կարգին ԵԱՀԿ գործող նախագահին, ԵԱՀԿ Մինսքի խումբի համա-

նախագահներուն, Եւրոպական խորհուրդի եւ ՄԱԿ-ի մարդու իրաւունքներու յանձնակատարներուն:

Ընդհանուր առմամբ մինչ հիմա, Ատրպէյճանէն Հայաստան վերադարձուած է 69 գերի: Իսկ Ատրպէյճան տեղափոխուած է 16 անձ, ներառեալ՝ 2014-ին Արցախի էջ երեխայի սպանութեան ու այլ յանցագործութիւններու համար դատապարտուած՝ Շահպազ Կուլիեան ու Տիւրքմալ Ասքերովը:

Պաշտօնական Պաքոն կը յայտարարէ, թէ գերիներու հարցը փակուած է, եւ Ատրպէյճան պահուող անձինք ռազմագերիներ չեն

## «Ամէն Ինչ Պիտի Փոխուի». Պաշտպանութեան Փոխնախարարը՝ Բանակի Մասին

«Բանակում փոխուելու է եւ կը փոխուի ամէն ինչ», այսօր՝ Ապրիլ 16-ին յայտարարեց պաշտպանութեան փոխնախարար՝ Արման Սարգսեան՝ Ազգային ժողովէն ներս պատասխանելով լրագրողներու հարցին:

Լրագրողները մասնաւորապէս հարցուցին փոխնախարարին, թէ յայտարարուած բարեփոխումներու ծիրէն ներս մասնաւորապէս ի՞նչ պիտի փոխուի բանակին մէջ: «Փոխուելու է եւ կը փոխուի ամէն ինչ: Երբ որ արդիւնքները տեսանելի լինեն, դուք կը տեսնէք», - ըսաւ փոխնախարարը:

Հարցին, թէ գերիներու խնդիրը ինչպէ՞ս պիտի լուծուի, Արման Սարգսեան պատասխանեց. - «Յօգուտ Հայաստանի Հանրապետութեան»:

Օրերս վարչապետը յայտարարեց, որ բանակի խոր եւ բովանդակային բարեփոխումներու գործընթացը արդէն սկսած է:

«Ռազմավարական հեռանկարում մենք պատկերացում ենք, որ



ՀՀ պաշտպանութեան փոխնախարար՝ Արման Սարգսեան

լրջօրէն պէտք է քննարկենք Հայաստանի Հանրապետութեան անցումը արհեստավարժ բանակի, եւ ժամկէտային կամ զօրահաւաքային զինծառայութեան կառուցուածքը պէտք է հակամարտին կարողանանք փոխել», - ըսաւ Փաշինեան:


## Լեւոն Տէր-Պետրոսեանը Վարակուած Է «Քորոնա» Ժահրով

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի մօտ «Քորոնա» ժահր ախտորոշուած է:

Այս մասին դիմատետրի իր էջին վրայ յայտնած է առաջին նախագահի մամուլի խօսնակ՝ Արման Մուսիսեան:

«ՀՀ Առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը օրերս յանձնել է COVID թեւթ, որի արդիւնքում ախտորոշուել է «Քորոնա» վիրուս: Նախագահ Տէր-Պետրոսեանի ինքնազգացողութիւնը նորմալ է, նա անհրաժեշտ փրոֆիլաքթիկ բուժումը ստանում է տանը՝ բժիշկների հսկողութեան տակ», - ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Լեւոն Տէր-Պետրոսեան այժմ կը գտնուի տունը՝ իր բժիշկներու հսկողութեան տակ:



## Ատրպէյճանի Ղեկավարութեան Հայատեաց Վարքագիծը Կառուցողականութիւն Ակնկալելու Հիմք Չի Տար. ԱԳՆ Խօսնակ

«Հայաստանին առաջարկուել է ստորագրել խաղաղութեան պայմանագիր, սակայն դեռ հայկական կողմէն որեւէ արձագանգ չէ եղած»:

Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւի օրերս ըրած այս յայտարարութեան ի պատասխան, Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամուլի քարտուղար՝ Աննա Նաղտալեան «Ազատութիւն»-ի հետ գրոյցին ըսաւ, որ Ատրպէյճանի ղեկավարութեան հայատեաց դիրքորոշումն ու վարքագիծը կառուցողականութիւն ակնկալելու հիմք չի տար. - «Խաղաղութեան պայմանագրի ստորագրման համար նախ եւ առաջ անհրաժեշտ է խաղաղ գործընթաց, որը դադարել է Ատրպէյճանի կողմից ուժի կիրառումից յետոյ»:



Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամուլի քարտուղար՝ Աննա Նաղտալեան

Պաքոնի մէջ կազմակերպուած «Նոր հայեացք Հարաւային Կովկասին, յետհակամարտային զարգացում եւ համագործակցութիւն» խորագրով միջազգային համաժողովի ընթացքին Ալիեւ, պատասխանելով մասնակիցներու հարցերուն, նաեւ նշած է, թէ Ղարաբաղի տարրը լուծուած է, Հայաստանէն տարած քային պահանջները չունին, իսկ հայկական բանակի արդիականացումը մտահոգիչ համարած է:

Այսպիսի յայտարարութիւններուն զուգահեռ, Ալիեւ օրեր առաջ Պաքոնի մէջ բացաւ «ռազմական աւարի պոլրակը», ուր հայկական զինատեսակներէն բացի նաեւ զոհուած հայ զինծառայողներու սաղաւարտներ, հագուստ, սպաննուած, վիրաւոր, գերեզմարուած, կապկպուած հայ զինուորներ

րու մարդապատկերներ ցուցադրուած են:

Ասիկա, ըստ Հայաստանի ԱԳՆ մամուլի խօսնակին, Ատրպէյճանի հայատեաց վարքագծի վառ օրինակներէն մէկն է. - «Ինքնին ցուցադրութեան կազմակերպումը դիտակապուածութեան տարրեր պարունակող տեսարաններով եւ զոհուած հայ զինծառայողներու յիշատակի նկատմամբ անարգանքի դրսեւորումներով, ինչպէս նաեւ ռազմագերիների հարցի շահարկումը Ատրպէյճանի կողմից գալիս է ապացուցելու, թէ որքան հեռու է կանգնած Ատրպէյճանի ղեկավարութիւնը յետպատերազմեան իրավիճակի, տարածաշրջանային խաղաղութեան եւ հաշտեցման վերաբերեալ իր կատարած յայտարարութիւններէ»:

## Թիֆլիս Կը Վերահաստատէ Երեւանի Եւ Պաքուի Բանակցութիւններու Հարթակ Տրամադրելու Պատրաստականութիւնը



Հայաստանի եւ Վրաստանի նախագահները Թիֆլիսի մէջ

Թիֆլիս կը մնայ պատրաստակամ՝ հարթակ տրամադրելու Հայաստանի ու Ատրպէյճանի առաջնորդներու բանակցութիւններու համար, Ապրիլ 15-ին յայտարարած է վրաստանի նախագահ՝ Սալոմէ Զուրաբիշվիլին՝ Հայաստանի նախագահ՝ Արմէն Սարգսեանի հետ համատեղ ասուլիսին:

«Վրաստանը դարաբաղեան հակամարտութեան ընթացքին եւ հիմա ալ կանգնած է խաղաղութեան կողքին, եւ այդ նպատակով ալ առաջարկած ենք Թիֆլիսի մէջ

հանդիպում կայացնել՝ երկխօսութեան ու իրավիճակի կարգաւորման համար: Այդ առաջարկը կը մնայ ուժի մէջ», - ըսած է Զուրաբիշվիլին:

Հայաստանի նախագահը, որ պաշտօնական այցելութեամբ մեկնած է վրաստան, յայտարարած է, որ հայ-վրացական յարաբերութիւններու ամրապնդումը ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ տարածաշրջանի անվտանգութեան ամրապնդման կարեւոր նախադրեալներէն մէկն է:

# Ըստ «Լրագրողներ Առանց Սահմանների» Կազմակերպության, Հայկական Մամուլը Բազմազան է, Բայց Ոչ Անկախ



«Բազմազան, բայց ոչ անկախ», - «Լրագրողներ Առանց Սահմանների» կազմակերպությունը Ապրիլի 20-ին հրատարակած իր տարեկան գեկոյցով այսպես բնութագրած է հայաստանեան լրատվամիջոցները ներկայ վիճակը:

Կազմակերպությունն գնահատում է մամուլի ազատության մակարդակը Հայաստան այսօր աշխարհի 180 երկիրներում մեջ 63-րդն է: Թեև նախորդ տարուհի համեմատ երկու հորիզոնականով նահանջած է, այնուհանդերձ այն կը շարունակէ մնալ յետորհրդային տարածքի ամենաազատ մամուլ ունեցող պետություններից մեկը՝ զիջելով միայն հարեւան Վրաստանին:

«Թեև մետաբազմազանությունը երկրում ծաղկում է, այնուհանդերձ, 2018 թվականի գարնանը տեղի ունեցած «Թալաշայ չեդափոխություն» արդիւնքում ձեւաւորուած կառավարութիւնն այդպէս էլ չի կարողացել նուազեցնել լրատվամիջոցների բեւեռացման մակարդակը», - կը պնդեն գեկոյցի հեղինակները՝ արձանագրելով, - «Առաջատար հեռուստաընկերությունների խմբագրական քաղաքականությունը համընկնում է դրանց սեփականատէրերի շահերի հետ, լրատվամիջոցների սեփականատէրերի մասին տեղեկատվութեան թափանցիկութիւնն ու լրագրողական անկախութիւնը դեռ շատ հեռու են կայացած իրողութիւն համարուելուց»:

Նշելով, որ լրագրողներու անկախ գործունէութեան հնարաւորութիւնները ալ աւելի սահմանափակուեցան 2020 թվականի Սեպտեմբեր 27-ին, Լեւոնային Ղարաբաղի ռազմական գործողութիւններու մեկնարկէն յետոյ, «Լրագրողներ Առանց Սահմանների» կազմակերպութեան փորձագէտները կը նկատեն, որ լրատվամիջոցներու ներկայացուցիչները երբեմն նաեւ քաղաքական որոշ

խումբերու յարձակումներու թիրախ կը դառնան:

«Դա տեղի ունեցաւ Նոյեմբեր 10-ին, երբ հրադադարի կնքումից քիչ անց յարձակման ենթարկուեց «Ազատութիւն» ռատիոկայանի գրասենեակը», - կը գրէ գեկոյցը:

Ձեկոյցի հեղինակները նաեւ նկատել կու տան, որ հայաստանեան լրատվամիջոցներու գործունէութիւնը շատ չաճախ կ'ենթարկուի դատական մարմիններու միջամտութեան:

«Լրագրողների դէմ դատական վարույթների եւ կեղծ լուրերի դէմ պայքարում արձանագրուող միջոցառումների ծաւալը մտահոգիչ է: Մտահոգութեան տեղիք է տալիս նաեւ անվտանգութեան ծառայությունների ներգրաւումը ապատեղեկատվութեան դէմ պայքարում, ինչպէս նաեւ այն հանգամանքը, որ [ապատեղեկատվութեան դէմ պայքարին վերաբերող] օրէնքներն ընդունելու փորձերը ձեռնարկուած են առանց քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչների եւ լրագրողների հետ նախապէս քննարկելու», - կը պնդեն գեկոյցի հեղինակները:

Ամփոփելով Հայաստանի լրատվական դաշտին ներս տիրող կացութիւնը՝ «Լրագրողներ Առանց Սահմանների» կազմակերպութիւնը յատկապէս կ'ընդգծէ. «Հարկ է նկատել, որ հետաքննական լրագրութիւնը համացանցում լայն տարածում է ստացել՝ ի վիճակի լինելով կարեւոր դեր խաղալ երկրում քուռփցիցի դէմ ծաւալուած պայքարում»:

Անդրադառնալով հարեւան Ատրպէյճանի մէջ տիրող իրավիճակին՝ «Լրագրողներ Առանց Սահմանների» կազմակերպութիւնը կ'արձանագրէ, որ «մամուլի ազատութեան ցուցանիշով այդ երկիրը կը շարունակէ մնալ աշխարհի յետնապահներու շարքին՝ գրաւելով 167-րդ տեղը:

## Հայաստանի Տնտեսութիւնը Կը Վերականգնուի. Կ'ըստ «Իմ Քայլի» Պատգամաւորը

«Հայաստանի տնտեսութիւնը վերականգնուած է, եւ Մարտ ամսից սկսած կանխատեսուած է կայուն տնտեսական աճ»: Այս մասին ԱԺ ձեպագրուցներու ժամանակ ըսաւ «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր՝ Գէորգ Պապոյեան:

««Քորոնա» ժահրը ոչ միայն մարտահրաւէր է եղել մեզ համար, այլ նաեւ տնտեսութեան առանձին ճիւղերի համար հնարաւորութիւն: Առանձին ճիւղերում մենք արձանագրել ենք լաւ ցուցանիշներ», - ըսաւ Պապոյեան:

Պատգամաւորը, որպէս օրինակ բերաւ հագուստի, էլեկտրա-

կան սարքաւորումներու, կահոյքի արտադրութիւններու եւ շարք մը այլ ոլորտներու մէջ արձանագրուած աճը: Ասոր գուզահեռ, ըստ անոր, նաեւ առանձին ոլորտներու մէջ արտահանման աճ կայ, ինչը «Քորոնա» ժահրի ընձեռած հնարաւորութիւններուն արդիւնքն է:

Պապոյեանի խօսքով՝ պահպանուած է մաքրոտնտեսական կայունութիւնը, ինչ որ արտաշատուած է պատերազմէն յետոյ եւրոպական բաժնետոմսերու թողարկմամբ:

«Յունուար-Փետրուար ամիս-

## Երբ Ատրպէյճան Արբանեակ կը Գնէր

Շարունակուած էջ 1-էն

«Մենք պէտք է արձանագրենք, որ մենք կուր ենք տուել ընդդէմ այդ 20-ամեայ դաւաճանութեան, ընդդէմ 20-ամեայ անձնատուութեան: Բայց նոյնիսկ բուն կուրի եւ պատերազմի ժամանակ նրանք պաշտպանել են իրենց պարտութիւնը՝ մեր հասցէին հնարաւորինս բարձր գողալով դաւաճան, որ իրենց դաւաճանութիւնը քօղարկեն, մեր հասցէին հնարաւորինս բարձր գողալով անձնատուր, որի իրենց անձնատուութիւնից ուշադրութիւնը շեղեն: Անձնատուրները դուք էք, դաւաճանն՝ առաւել եւս, ասում եմ 20 տարի Հայաստանը թալանած, իշխած վերնախաւին,

մանագրերի տրամաբանութեամբ յարձակումը Հայաստանի վրայ նշանակում է՝ յարձակում Ռուսաստանի վրայ, եւ երկու երկրները համատեղ պէտք է դիմակայեն արտաքին մարտահրաւէրները», - ըսաւ վարչապետը:

Վարչապետը ընդգծեց, որ այս համաթեքսթով մեկնարկած է նաեւ Հայաստանի Զինուած Ուժերու բարեփոխումներու լայնածաւալ գործընթացը, որ կը ներառէ նախ կառուցուած քայլին, ապա՝ բովանդակային փոփոխութիւններ:

«Ռազմավարական հեռանկարում մենք պատկերացնում ենք, որ լրջօրէն պէտք է քննարկենք Հայաստանի Հանրապետութեան անցումը արհեստավարժ բանակի, եւ



Վարչապետ Փաշինեան Ելոյթ կ'ունենայ Ազգային Ժողովէն Ներս

իսկ մենք ամէն օր երբեմն կենաց մահու կուր ենք տուել ձեր անձնատուութեան եւ դաւաճանութեան դէմ, եւ ուզում եմ այս բարձր ամպիտինից յայտարարել, որ շարունակելու ենք մեր պայքարը յանուն ազատ, հօր եւ երջանիկ Հայաստանի»:

Հայաստանի Հանրապետութեան արտաքին անվտանգութեան ապահովման առանցքը հայ-ռուսական ռազմական դաշինքն է, նշեց վարչապետը՝ ընդգծելով, որ անոնք ամրապնդուած են քանի մը տասնեակ ռազմավարական բնոյթ ունեցող միջազգային պայմանագրերով եւ փոխադարձ դաշնակցային պարտաւորութիւններով:

«Այս առումով Հայաստանի անվտանգութեան համար գործնական կարեւոր նշանակութիւն ունեն հայ-ռուսական միացեալ զօրախմբաւորումը եւ Հաւաքական անվտանգութեան կողմասեան տարածաշրջանում հայ-ռուսական հակաօդային պաշտպանութեան միացեալ համակարգը: Այս երկու համակարգերը ձեւաւորած պայ-

ժամկէտային կամ զօրահաւաքային զինձառաջութեան կառուցուածքը պէտք է էականօրէն կարողանանք փոխել: Բացի դա, մենք քննարկում ենք Հայաստանում ռուսական 102-րդ ռազմակայանի հնարաւորութիւնները հարստացնելու հարցը, նաեւ արդիւնաւէտ քննարկումներ ենք ունենում Ռուսաստանի մեր գործընկերների հետ Սիւնիքի մարզում 102-րդ ռազմակայանի յենակէտ ունենալու վերաբերեալ:

Հեռանկարում մենք պատկերացնում ենք, որ Հայաստանի պետական սահմանների այն հատուածների պաշտպանութիւնը, որն իրականացնում է Զինուած Ուժերը, կը դրուի սահմանապահների վրայ, իսկ բանակի ստորաբաժնումները կը զբաղուեն բացարձակապէս մարտական պատրաստութեան եւ մարտունակութեան բարձրացման հարցերով: Արցախի անվտանգութիւնը կը շարունակի իրականացնել Պաշտպանութեան բանակը՝ ռուսական խաղաղապահ ուժերի հետ համատեղ», - ըսաւ Փաշինեան:

ներին հարկային մուտքերն աւելացել են ծրագրուածից 8 տոկոսից աւելի: Սա նոյնպէս յոյս է տալիս, որ տնտեսութիւնն արագ ընթաց-

քով վերականգնուած է: Եւ մենք կանխատեսում ենք Մարտ ամսից սկսած կայուն տնտեսական աճ», - աւելցուց պատգամաւորը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ՂԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՂԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**(626) 797-7680**

# Հայաստան եւ Հայութիւն. Դէպի Ո՞ր

«Ծանրութիւնը կորսնցուցածիդ, որ արդէն անցեալ կատարեալ է, պէտք չէ՛ մթագնէ պայծառ ապագայ մը տեսնելու եւ կերտելու կարողութիւնը: Ատելութեան ու ակոսասանքի քանդիչ զգացումները պէտք չէ՛ տեղ գտնեն ինքնակերտման շիրիշ ձգտումներու մէջ»:

Գեորգ Տեր Դաւիթեան (եղբնէն վերապրած հայրս)

## ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Ընդունուած երեւոյթ է, որ մարդ անհատը իր ունեցածին արժէքին աւելցնելով կը գիտակցի միայն զայն կորսնցնելէ ետք: Անհատի կեանքին վերաբերող այս իրակախութիւնը պէտք է որ տարբերուի ազգի պարագային, որ հաւաքական գիտակցութեան առաւելութիւնը ունենալով, պէտք է խուսափի անհատ մարդուն անձնական վերիվայրումներէն: Այս հաւաքական գիտակցութեան առողջութեան մակարդակը կապուած է երկրին մէջ տիրող ժողովրդավարութեան մակարդակէն: Որքան աշխոյժ է տուեալ երկրի մը ժողովրդավարութիւնը, այնքան աւելի քիչ է սոցիալաբուսական հաւանականութիւնը: Ուր կայ մենատիրութիւն, հոն կայ սոցիալաբուսական շատ աւելի մեծ հաւանականութիւն:

Երբ ակնարկ մը կը նետենք 30 տարիներու մեր անկախ պետականութեան կեանքին վրայ, յստակ կը դառնայ ժողովրդավարութեան, առողջ եւ ազատ մթնոլորտի մէջ գաղափարներու քննարկման պակասը: Հոն աւելի շեշտուած կը տեսնենք անհատի պաշտամունքի ու մենատիրական ձգտումներու մշակոյթի կիրառումը, փոխան դադարներու եւ ժողովրդավարական սկզբունքներու կիրարկման: Եթէ 70 տարիներու սովետական համակարգին վերազդեցութիւնը այս թեւորին, ապա ինչպէ՞ս բացատրել նոյն ժողովրդավարութեան որդեգրումը հայրենիք վերադարձած մեր աւանդական կուսակցութիւններուն կողմէ: Հոսկէ յստակ կը դառնայ այս գծով մեր համազգային ձախողումը: Ու հոսկէ կը սկսի նոր գործելաձեւի որդեգրման անհրաժեշտութիւնը, կարենալ այս վիճակէն դուրս գալու յարմարագոյն ելքերը գտնելու համար:

Հարցը չսահմանափակուիր Հայաստանի եւ հայրենի ժողովուրդի վիճակով, այլ կ'ընդգրկէ աշխարհացրիւ հայութեան ապագան ալ: Որովհետեւ մեր կրած պարտութիւնը բոլորիս պարտութիւնն է իր բոլոր ծանր հետեւանքներով: Որ կը նշանակէ, ազգովին պէտք է լծուինք ելքերու որոնման աշխատանքին: Այդ աշխատանքը բոլորիս կը պահանջէ ըլլալ անկեղծ մեր ձախողութեանց եւ բացթողումներու քննարկման մէջ, որդեգրել անհատականէն ու կուսակցականէն վեր՝ ազգասէր եւ ազգաշահ մօտեցում, եւ այս բոլորը կատարել արհեստավարժ մասնագէտներու առաջնորդութեամբ:

Այս աշխատանքին սկսելէ առաջ, կ'արժէ նշել 1988-էն ի վեր մեր անցած ճանապարհի կարգ մը յատկանշական երեւոյթները:

### 1.ՀՀԵ-ՀՅԴ հակամարտութիւնը:

Պատմութիւնը մեզի կը թելադրէ, որ ամէն ժամանակը շան կ'ունենայ իր «մարդիկ»ը, որոնք իրենց դրոշմը կը դնեն անոր վրայ: 1923-ին Յ. Քաջագունի կը գրէր. «Երբ ներկայ քաղաքական պայմանները փոխուին հիմնովին կամ խոշոր չափերով, հաւանական է, որ խորհրդային իշխանութիւնը՝ իբրեւ անհարգատու անհամապա-

տասխան հայկական իրականութեան՝ հարկադրուած լինի տալ իր տեղը ուրիշ ոչ ժողովրդացապետական ու հասարակական խմբակցութիւններու: Նա եւս կատարած ու աւարտած կը լինի իր դերը: Բայց Դաշնակցութիւնը չէ, որ պիտի փոխարինի բոլշեւիկներին... Արդ՝ օգնել բոլշեւիկներին Դաշնակցութիւնը չի կարող, մնում է որ չխանգարի - ա՛յդ կը լինի նրա օգնութիւնը:»

Իսկապէս ալ, 70 տարիներու խորհրդային իշխանութիւնէ ետք, 1988-ի շարժումը մէջտեղ բերաւ ՀՀԵ-ին, որ առաջնորդեց այն դէպքի անկախութիւնը, հակառակ Դաշնակցութեան ջանքերուն: ՀՅԴ-ն, որ կը կարծէր թէ հայ ժողովուրդի առաջնորդութիւնը իր մենաշնորհն է, պայքար բացաւ ու խանգարեց ՀՀԵ-ին: Նոյնիսկ Արցախեան ազատամարտի հիմնադրի յաջողութիւնէն ետք, ՀՅԴ մամուլը գրեց, որ այդ եղաւ «ի հեճուկս Լեւոն Տէր Պետրոսեանի» ու շարունակեց շեշտադրել «ցուրտ ու մութ տարիներ» ու գրկանքը, փոխանակ շեշտադրելու ազատագրական պայքարի յաջողութիւնը: Ասիկա ցոյց տուաւ, որ ՀՅԴ-ի մօտ աւելի գերադաս է կուսակցական շահը, քան՝ ազգային շահը: Այս մէկը աւելի շեշտուեցաւ Քոչարեանի իշխանութեան տարիներուն, երբ ՀՅԴ-ն լուր մնաց սահմանադրական աստիճանի խախտումներու եւ միլիտարիզմի հասնող թախանջի տես, մինչ լուսարձակի տակ կ'առնէր Տէր Պետրոսեանի իշխանութեան տարիներու իրական եւ նոյնիսկ երեւակայածին մանր թէ մեծ սոցիալաբուսներ:

### 2. Հոկտեմբեր 27, 1999

Երբ նորանկախ պետականութեան տրուած մեծագոյն հարուածը եկաւ Հոկտ. 27-ի սպանդով, որ զազաթնակէտն էր մեր ազգի մէկ «մաս»ին կողմէ օտարին գործիք ծառայելով «ամբողջ»ին տիրելու մարմնաշին: Այսօրուան տխուր իրականութիւնը սկիզբ առաւ այդ օրուանէն, որուն հետեւանքներէն էին նաեւ 2008-ի Մարտ 1-ի սպանութիւնները: Առաջինով զգտնուեցաւ մեր պետական աւագանին, իսկ երկրորդով՝ հասարակ ժողովուրդի գաւակները: Արդիւնքը եղաւ քսանամեայ մենատիրութիւն, իր բոլոր վնասաբեր հետեւանքներով:

### 3.Քոչարեան-Սարգսեան իշխանութեան տարիները

Երբ աչքի առջեւ կ'ունենանք Քոչարեան-Սարգսեան իշխանութեան քսան տարիները ու կը բաղդատենք 1988-էն 1998-ի տարիներուն հետ, յստակ կը դառնայ մեր նահանջի անհաղթելիութիւնը: Օրին, «Վատնուած Տասնամեակ» որակած էինք Քոչարեանի տարիները եւ մտահոգութիւն յայտնած, որ Սարգսեանին ալ տարբեր պիտի չըլլար: Նոյնիսկ 1998-ի նախագահական ընտրապայքարի ժամանակ մենք գրած էինք. «Թէեւ հարցախոյզերը անխուսափելի կը նկատեն Քոչարեանի ընտրութիւնը, մեր կարծիքով, այս ժամանակաշրջանին համար կարէն Դեմիրճեանը աւելի նպատակաշարժար թեկնա-

ծուն է ՀՀ նախագահի պաշտօնին»:

Քոչարեան ոչ միայն իշխանութեան տիրացաւ սահմանադրական իսխառնումներով, այլ պահեց այն սպանութիւններով ու թալանով: Սարգսեանի տարիները շատ տարբեր չեղան իր նախորդէն: Երկուքի տարիներուն մեր պետութիւնը շատ բան զիջեցաւ իր գերիշխանութիւնէն: Ինչպէս կը գրէինք 9 փետրուար 2008-ին. «Որեւէ իշխանութիւն, որ կեղծիքներով ու խախտումներով կը հասնի առաջնորդող դերի, չի՛ կրնար ծառայել ազգի յառաջդիմութեան»:

### 4. Թաւշեայ Յեղափոխութիւնը

Պատմութիւնէն դասեր քաղողին համար յստակ է, որ մենատիրութեան շարիքներուն կուտակումը իր բարձրակէտին կը հասնի յեղափոխութեան պոթելով: Քոչարեանի իշխանութեան առաջին հինգ տարիները բաւարար եղան մեզի համար 9 Յունուար 2004-ին գրելու «Ժողովուրդի Քայլը» յօդուածը, ուր կ'ըսէինք. «Երբ ժողովուրդը մը կը գիտակցի, որ անկուծալին վիճակէ մը կ'անցնի. երբ ժողովուրդը մը կը գիտակցի, որ ինքն է իր ճակատագրի տէրը եւ իր բարօրութիւնը օտարէն պէտք չէ յուսայ. երբ ժողովուրդը մը կը գիտակցի, որ ինքն արժանի է արժանապատիւ կեանք ու ապագայ ունենալու, ապա այդ ժողովուրդը իր մէջ ուժ կը գտնէ փոխելու իր ճակատագիրը եւ յաղթահարելու ներքին թէ արտաքին մարտահրավէրներ»: Պէտք եղաւ սպասել մինչեւ 2018, որ պոթելայ յեղափոխութիւնը, առիթը տալով ժողովրդավար կարգերու հաստատման: 12 Մայիս 2018-ին կը հրատարակէինք մեր «Ողջախոհ Ազգասիրութիւն» խորագրով յօդուածը, ուր կ'ըսէինք. «Այսօր, շատ ծանր պարտականութիւն մը կը դրուի իր (Փաշինեանի) ուսերուն վրայ եւ մենք ամէն գնով պէտք է սատարենք իրեն, որ մնայ հաւատարիմ իր առաքելութեան, չի՛ խոտորի ու չի՛ եղծանուի: Ժողովուրդին մէջ առկայ է այն ոգին, որ կար 88-ի շարժումին եւ Հոկտեմբեր 27-ի նախօրեակին: Վայ եկէր է մեզի եթէ այս առիթն ալ փախցնենք»: Դժբախտաբար անգամի մը համար եւս անձական փառասիրութիւններն ու հատուածական շահերը խանգարեցին առողջացման այս բնական գործընթացը ու դարձեալ փախցնելով մեր պետականութիւնը ամրապնդելու ոսկեայ առիթը, յայտնուեցանք այս վատ վիճակին մէջ:

### Ի՞նչ ընել

Ներկայիս մեզ մտահոգողը դարձեալ լուրջ քննարկումներու բացակայութիւնն է, թէ ի՞նչ պէտք է ընել այս տխուր իրավիճակէն յարմարագոյն ելքեր գտնելու համար:

Փոխանակ յումայէտս գիրար վատաբանելու եւ դաւաճան յորջորջումով պիտակաւորելու մեր կարծիքը չբաժնողները, օգտակար գործ կատարած կ'ըլլանք մեր պարտութեան իսկական պատճառներու եւ ամբողջական պատկերի բացայայտմամբ: Ասոնց բացակայութեան, դուռը բաց պահած կ'ըլլանք ամէն տեսակի խաբէութեանց ու շարաշահութեանց, որմէ պիտի տուժենք ազգովին, որովհետեւ ոչ պիտի կարենանք յաղթահարել մեր

առջեւ ցցուող արգելքները եւ ոչ ալ օգտուիլ ներկայացուող առիթներէն: Անձերու հրաժարականները պահանջելէ անդին, պէտք է հիմնաւորուին այդ պահանջին ծնունդ տուող պատճառները: Օրինակի համար առնենք Փաշինեանի պարագան: Եթէ հիմնաւորուի մեր այս կրած պարտութեան իր պատասխանատուութիւնը, ապա ան պէտք է իր տեղը զիջի, աւարտած համարելով իր դերը՝ մենատիրութեան տապալման եւ ժողովրդավարութեան հաստատման մէջ:

Մեր քաղաքագէտներուն եւ մտաւորականութեան պարտակախութիւնը պէտք է ըլլայ ամէն գնով տէր կանգնիլ ժողովրդավարական կարգերուն եւ օրէնքի գերակայութեան գործադրման, արգելք հանդիսանալով մենատիրական կարգերու վերադարձին, որ աւելցնի աղետաբեր պիտի ըլլայ: Անոնք նաեւ պէտք է բարձրաձայնեն եւ հրապարակաւ քննարկեն սպասուող հաւանականութիւնները եւ ըստ այնմ պատրաստեն ժողովուրդը:

Համազգային ուժերու լարումով, մենք ինչպէ՞ս կրնանք տնտեսապէս զարգացնել մեր երկիրը, որ բարելաւենք ժողովուրդի գէթ կենցաղային մակարդակը, այդպիսով նպաստելով արտագաղթի կասեցման եւ ինչո՞ւ ոչ՝ հայրենադարձութեան:

Տնտեսական զարգացման առընթեր, ինչպէ՞ս հզօրացնել մեր բանակը, որ մեր պաշտպանութեան ապաւէնն է:

Եթէ Ռուսիան, կարճ կամ երկար ժամանակով, քաշուի մեր տարածաշրջանէն, մենք ինչպէ՞ս պիտի լեցնենք այդ բացը, որ դարձեալ չտուժենք:

Եթէ թուրքերու եւ կամ Ազրպէյճանի մէջ յեղաշրջումներ ծագին, մենք ինչպէ՞ս կրնանք օգտուիլ անոնցմէ:

Արդե՞օք ճիշտ է ներկայիս հետապնդել Արցախի անկախութեան հարցը, երբ թէ Ռուսիան եւ թէ Ֆրանսան ու Անգլիան ներքին «Արցախներ» ունենալով գործնականօրէն պիտի չզօրակցին մեզի ու բաւարարուին յաւուր պատշաճի յայտարարութիւններով:

Գիտակցելով հանդերձ, որ Հայաստան կը գտնուի Ռուսական ազդեցութեան գոտիին մէջ եւ բազմաթիւ թելերով կախեալ է անկէ, ինչո՞ւ չձգտել այլ տարբերակներու հետ յարաբերութեանց զարգացման:

Գիտնալով հանդերձ, որ արտաքին յաջողութեանց հիմքը ներքին հզօրութիւնն է, ինչո՞ւ մեր ուժերուն անհամեմատ երազներ կը փայտալցնէր ու ապա յուսախաբ կը դառնանք: խորհրդային մեզի պատգամած է մեր վերմակին համեմատ մեր ոտքերը երկնցնել: Ինչո՞ւ չենք անսար անոր պատգամին: Թշնամիին տկարութիւնը հեզնելէ առաջ, մէջ մը չափենք, որ համեմատականօրէն ո՞ւր ենք մենք եւ ըստ այնմ շարժինք, որ չտուժենք:

Ծանր պարտութիւնը որ կրեցինք, առաջինը չէր մեր վերջին հարիւր կամ քիչ մը աւելի պատմութեան մէջ: Եթէ ճիշտ վարուած ըլլայինք ամէն պարտութիւնէ ետք, կասեցուցած կ'ըլլայինք անոնց շարանը: Պատեհութիւնը ունինք գէթ այս անգամ ճիշտ դասերը քաղելու եւ ըստ այնմ գործելու: Պիտի ընենք:

### Հովի Լճան՝ Վիշադ Թեթի Թող Լինի



#### ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Մեր տարագրեալ պապերու եւ տատերու թաց աչքերուն ու արցունքներուն հետ միասին, հայ սերունդներ մեծցան հարիւր տարուան երկայնքին՝ իրենց սրտերուն վրայ ունենալով անոնց արցունքով գոյացած չսպիւսցող վէրքը:

Այդ վէրքը մղեց ասլան ու կտրիճ հայ տղաներ Հայոց Յեղասպանութեան ոճագործներն սպաննելու եւ կէս դար ետք ալ, գաղտնի եւ ոչ-գաղտնի բանակ դարձած ու վրիժառութեան դրօշ պարգած՝ այդ ցեղասպանութիւնը հերքող իշխանութիւններուն ներկայացուցիչները չարաչար պատժելու:

Այդ վէրքը մղեց, որ արցախահայութեան փրկութեան եւ ազատագրման սրբազան գործին նետուի մեր ժողովուրդը հայրենիքի եւ սփիւռքի մէջ, երբ Սուճկայի Չարդերէն ետք նոր ցեղասպանութեան պատկեր կ'ուրուագծուէր:

Եւ երեսուն տարի այդ վէրքի ամոքումին ու բուժումին ընթացքով քալող մեր ազգը ինքնախաբէութիւն սերմանող եւ տարածող սեփական իշխանութիւններուն խաբկանքին գոհը դարձաւ, երբ հայրենիքի ու սփիւռքի մէջ ԱՆՆՄԱՆ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄբ ոտքի կանգնած տեղէն

յանկարծ գետին ինկաւ՝ անկրելի պարտութեան մը թոյնը խմելով:

Ապրիլ 24-ին եկաւ միանալու սեւ թուական մը եւս՝ Նոյեմբեր 9:

Մեր մէջ գտնուող բարի եւ ազնիւ սրտեր ու հոգիներ ունեցողներ կը փորձեն յուսալքութեան տիղմէն դուրս բերել մեզ՝ վկայակոչելով մեր անցեալի բոլոր պարտութիւններէն ետք ոտքի կանգնող մեր ժողովուրդին կրանիթեայ կամքն ու փորձառութիւնը: Շնորհակալ փորձին հետ անոնց՝ փորձեք չբաւականանալ հերոսացնելով ու սրբացնելով մեր հերոսները, այլ մատնանշեք պատասխանատուները, որոնք ամբողջ երեսուն տարի յաղթանակի պսակը հագած խաբեցին՝ քանի մը օրէն Պաքուն գրաւելու յոխորտանք ցոյց տալով մեզի, եւ մեր ժողովուրդին գլուխը անցած ու անոր տան երդիքը բաց թողած լիրբ ու անհոգ փութկոտութեամբ՝ մեզ բերին ու հասցուցին այս պարտութեան դուռը:

Այո՛, երբեք պիտի չուզենք մենք գմեզ դնել յուսալքութեան տիղմին մէջ, սակայն եւ այնպէս պէտք է, որ դառնութեամբ, ցասումով եւ ինքնաքննադատութեամբ գիտնանք ԱՅԼԵԻՍ մեր սքանչելի ժողովուրդին հերոսութեամբ եւ գոհաբերութեամբ մղուած բոլոր գոյամարտերը

չմխսել սխալ մեկնաբանութիւններով ու բացատրութիւններով, եւ տանք դէպքերուն ու պատասխանատուներուն անկողմնակալ վճիռ՝ դատապարտելու բոլոր յանցագործներն ու կեղծ հայրենասէրները: Մեր պաշտելի հայ բանակին հերոսութիւնը չվատնենք հոս ու հոն սակարկութեան շահախաղերու ոլորտներու մէջ, այլ գայն օժտենք հայու մտքի ու բազուկի վայել գինամթերքով: Զօրօրուինք ազատ եւ ինքնիշխան հզօր Հայաստան մը երագելով եւ գիտնանք, թէ թուրքիոյ պէս հզօր թշնամի դրացիի մը դէմ դնելու համար հարկ է, որ ունենանք հզօր բարեկամ Ռուսիոյ թիկունքն ու հովանին:

Ըսինք, թէ Ապրիլ 24-ին եկաւ միանալու սեւ թուական մը եւս՝ Նոյեմբեր 9:

Հայոց Յեղասպանութեան դատին վրայ եկաւ աւելնալու Արցախի հողային ամբողջականութեան վերատիրանալու ազգային պատասխանատուութիւնը: Երկար ճամբայ կտրեցինք թուրքիան ոճագործ երկիր ճանչցնելով աշխարհին:

Արեւմտեան մեծ թիւով երկիրներ, - մեր հաւաքական ջանքերով տարուած գործով, - պաշտօնապէս ճանչցան Հայոց Յեղասպանութիւնը: Կ'սկսնալուի, որ յառաջիկայ շաբաթ՝ ապրիլ 24-ին, Ամերիկան ալ պաշտօնապէս ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը: Ոչինչ պիտի փոխուի անշուշտ թրքական հերքումի քաղաքականութենէն, սակայն օղակը իր վզին նեղցող էրտողան պարտութիւն մը կրած ըլլալու դառնութեամբ՝ գուցէ ուզէ չափուիլ կամ ճակատիլ հզօր Ամերիկայի հետ, որու պարագային կրնայ տարբեր հարթակներու եւ ճակատներու վրայ կորուստներ արձանագրել: Սփիւռքը որեւէ ժամանակէ աւելի գինուորագրուած է Հայաստանի եւ Արցախի օգնութեան հասնելու: Եւրոպայի հայ գաղութները, առաջնորդութեամբ Ֆրանսայի օրինակելի գաղութին, շնորհակալ գործ կը տանին ամերիկահայ եւ գանատահայ գաղութներուն հետ՝ հայ դատն ու ձայնը լսելի դարձնելու իրենց ապրած երկիրներուն մէջ: Բարեբախտաբար,

Հայաստանի մէջ առկայ յետպարտութեան անախորժութիւնները արձագանգ չգտան սփիւռքի մէջ եւ յոյսով ենք, որ չեն գտներ նաեւ ապագային: Ամէն ինչ Հայաստանի եւ Արցախի օգտին ծառայեցնելու գործին պէտք է մղուին սփիւռքահայ բոլոր ուժերը այս ճակատագրական օրերուն:

Հայկական ժողովրդային սիրային երգի մը տողերէն առնուած «Հովի նման՝ վիշադ թեթեւ թող լինի» ըսելով՝ մխիթարութիւն կը ցանկանք բոլոր անոնց, որոնք արցախեան 44-օրեայ այս վերջին պատերազմին կորսնցուցին հերոս գինուոր մը խրամատներուն մէջ, կորսնցուցին զաւակ, հայր, քոյր եւ եղբայր, կամ գերի մը ազգերի բանտերուն մէջ: Կ'ուզենք ըսել, որ իրենց այդ կորուստը ազգային հաւաքական կորուստ ըլլալով, իր ծանրութեամբ ամէն հայու սրտին ու հոգիին վրայ ճնշելով՝ թող հաւաքաբար տանինք՝ ձեւով մը թեթեւցնելու իրենց վիշտը, խոր գիտակցութեամբ, թէ չկայ երբեք մոռացում իրենց նահատակութեան չիշատակին եւ կայ միայն ու միայն անվերջ մեծարանք ու յարգանք անոնց մարտիրոսութեան:

«Հովի նման՝ վիշադ թեթեւ թող լինի» խօսքով կ'ուզենք մխիթարել հայն ամէնուրեք՝ Ապրիլեան Եղեռնի չիշատակով անիրաւուած եւ Նոյեմբեր 9-ի պարտութեամբ տխրած:

Թող մեր ներկայ վիշտը դառնայ մեզ դէպի յաջողութիւն տանող վառելանիւթ՝ ճիշդ այնպէս, ինչպէս հարիւր տարի առաջ մեր տարագրեալ պապերն ու տատերը շատ աւելի խոնարհ միջոցներով, կարելիութիւններով ու կարողութիւններով հրաշքներ գործեցին՝ թիթեղաչն տուններէն դուրս գալով, հաճոյքնէն գրկուած՝ դպրոց ու եկեղեցի կառուցելով եւ ուսնալ ու կրթեալ զաւակներ մեծցնելով:

Փառք ու մեծարանք Ապրիլ 24-էն ետք ոտքի կանգնած եւ երբեք ծունկի գալ չուզող մեր այդ հերոս տարագրեալ սերունդին, եւ փառք ու պարծանք Նոյեմբեր 9-էն ետք ոտքի կանգնիլ ուզող եւ դէպի Շուշի ազատագրում ուղղուող մեր ներկայ եւ ապագայ սերունդներուն:

Candlelight Vigil  
To Commemorate  
The Armenian Genocide  
and Our Martyrs

**Friday April 23, 2021 7:30 PM**


Pasadena Armenian Genocide Memorial  
85 E. Holly St. Pasadena CA. 91103




Mask & Social Distancing Are Mandatory

### Յովնան Արք. Տերտրեանի Ապրիլ 24-ի Պատգամը «ԶՅՈՒՆ ՄԻ՝ ՇԻՋՈՒՑԱՆԷՔ»

Աւետարանաշունչ այս պատգամը բախասան է մեր ազգի սրտին բացուած եւ տակաւին չսպիտացաց ցաւօտ այն վերքին, որ կը շարունակէ անդադար մորմոքիլ: Մեր ազգի ու հայրենիքի կեանքը կը թուի ըլլալ տառապանքի կսկծալի շրջապտոյտ ճանապարհ մը, որ վերջ չունի: Ահա թէ ինչու մեր հոգին արթուն պահելու համար հազար պատճառ ունինք ականջ տալու Տիրոջ Առաքեալի պատգամին՝ «Զհոգին մի՛ շիջուցանէք», քանզի մեր կեանքի ճանապարհը յար եւ նման է Քրիստոսի չարչարանաց ու խաչի ճանապարհին:



Սահակ Բ. Խաչատրեան Կիլիկիոյ Հայրապետը, Եղիշէ Դուրեան եւ Զաւէն Տ. Եղիայեան Պատրիարքները, Բաբգէն Կիւլէսէրեան Աթոռակից Կաթողիկոսն ու Թորգոմ Գուշակեան եւ Մեսրոպ Նարոցեան Պատրիարքները, որոնք դարձան մերօրեայ դիւցազուն կրօնապետները, Արմաշէն եւ Սիսէն հալածուած, Սիսի Աջապահեան տոհմի սերնդակիցներ, եկան կերտելու

Սփիւռքի կրօնական եւ կրթական հաստատութիւնները: Որքան ճշմարիտ են սրբազան շարականագիրին խօսքերը, թէ անոնք նորոգուեցան Յարութեան աւետիսով ու հաւատքով եւ նորոգեցին հայութեան կեանքը անմիջական անցեալի մահաբեր խորշակներէն դարձնելով զանոնք ՆՈՐ ԺՈՂՈՎՈՒԻՒՅ:

Քրիստոսի թափուր գերեզմանը լոյսի եւ լոյսի վերածուեցաւ, երբ առաջին կանայք սարսափով չգտան մարմինը Խաչեցեալին: Եւ սակայն Յարութեան աւետիսը Յարուցեալ Փրկչին քառասորեայ բազմիցս երեւումներով, լրացուցին Անոր գերեզմանէն ո'չ թէ ուղիղ երկինք բարձրանալը, այլ իսկապէս գերեզմանէն իսկոյն դուրս գալը եւ առաքելներուն հետ հանդիպումները: Կանայք փութացին վերնատուն աւետելու Առաքելներուն իրենց գերեզմանին մէջ չգտածը, եւ փոխարէն՝ Յարուցեալ Փրկչին առաջին հանդիպումը, երբ Ան կ'ըսէր Մագդաղենացի Մարիամին, «կին դու, ինչո՞ւ կուլաս, զո՞վ կը փնտռես» եւ թերահաւատ թովմաս Առաքելին որ «ետես եւ հաւատաց»:

Առաքելներ շփոթած վազն ի վազ դէպի գերեզման փութացին, եւ շարականագիրին բառերով, Պետրոսն ու Յովհաննէսը այնքան զարմացած ու շփոթած էին, որ մին մէկ ուղղութեամբ եւ միւսը հակառակ ուղղութեամբ ընդ հակառակ թացեալ կը վազէին՝ աւետիսը առնելու եւ տանելու աճապարանքին մատնուած: Յարութեամբ նորոգուեցան բոլորը, ո'չ միայն առաջին օրը՝ Միաշաբթին, որ Կիրակին էր, այլ լման քառասուն օրերուն, հաւատարմ կամ շփոթելով, նոյնիսկ չհաւատարմ եւ ապացոյց փնտռելով կը շօշափէին Վարդապետին ոտներն ու ձեռքերը: Արդիւնքը Յարութեալ Փրկչին իսկական ներկայութիւնը եղաւ Առաքելներուն եւ վերնատան մէջ հաւաքուած հարիւրէ աւելի հետեւորդներու նորոգութեամբ:

Այսօր, Ապրիլ ամսուն, կանգնած մեր մերձաւորագոյն Սուրբ

Նահատակներու յիշատակին առջեւ, Հայաստանեայց Եկեղեցին իր հաւատաւոր ժողովուրդով կը վերանորոգուի ճիշդ այնպէս ինչպէս մեր նախորդ սերունդի նուիրեալներ վերանորոգեցին յետ-եղեռնեան հայ ժողովուրդը՝ Արեւելքի եւ Արեւմուտքի տարածքներուն: Հայաստան երկիրը պահ մը ոտքի կանգնեցաւ այդ օրերուն, եւ սակայն իսկոյն ինկաւ հօգր Սովետական մականին ներքեւ, այո՛ խոնարհեցաւ ու բարձրացաւ, սակայն դիմացաւ, ի վերջոյ կանգնելու վճռականութեամբ՝ մինչեւ նոյն պետականութեան աւելի ցանկալի յառաջդիմութեամբ, մինչեւ վերջնա-կան անկախութիւն:

Այժմ հերթը մե'րն է: Մե'րն էր նաեւ նախորդ քսանհինգ տարիներուն: Յիշեալ հոգեւորականները ինչպէս յոռեգոյն պայմաններու տակ, ո'չ մահադ, ո'չ կոշիկ, ո'չ գրպան, ո'չ դրամ, շերտ մը հացը իրենց գերագանց իմաստութեան կողքին որպէս դրամագլուխ վերականգնեցին անշունչ խլեակները, հասան իրարու, հասկացան ճգնաժամին միութիւնը ու յանձնեցին մեզի, յետնորդներու ժառանգը որպէս աւանդ: Այսօր դասունինք առնելու իրենցմէ:

Այսօր հայրենիք ունինք, ցանկալի հայրենիք եւ սակայն վիրաւոր հայրենիք, ինքն իր մէջ խոռված հայրենիք, եւ այսօր կը հասկնանք թէ ունենալը չի բաւեր, անոր տէրն ըլլալը նոյնիսկ չի բաւեր, այլ հայրենիքին անսակարկ ծառայութիւնն է միակ զբաւականը որ բաւական պիտի ըլլայ մեր ժողովուրդի միացեալ վերանորոգութեան: Փառք եւ պատիւ հինգ հազարներուն որոնք երէկ ինկան մեր աչքերուն առջեւ: Անոնցմէ ամէն մէկը լուսատու եւ պահապան ջահ մըն է կանգնած Հայաստանի սահմաններու երկայնքին: Սփիւռքը կը կարծենք թէ կը փայլի եւ սակայն հայրենի հողն է կենսականը որուն փայլքը Քրիստոսի Յարութեան լոյս գերեզմանէն պէտք է ճառագայթէ: Փառք Սրբոց Նահատակացն ազգիս հայոց որք անկան վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց երէկեւ այսօր:

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the  
**2021 AEBU Scholarship Program**  
Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website  
**WWW.AEBU.ORG**

**APPLY NOW**  
Through June 31, 2020

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321  
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE  
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

# 1913-1916 Թուականներին Թուրքիայում Ամերիկայի Միացեալ Նահանգների Դեսպան Ջեյմսի Մորգընթաուի Յուշերի Պատումներից

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳՍԵԱՆ

ՄՈՐՂԵՆԹԱՈՒԻ Ի ԲԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ԴԵՏ

Թուրքիայում, նստատեղ Իսթամպուլ, Ամերիկայի Միացեալ Նահանգների դեսպան Հ. Մորգընթաու իր յուշերում յայտնում է, որ 1915 թուականին Ամերիկեան դեսպանատուն հասել էին 1915 թուականի Յուշերում-Փետրուար ամիսների ընթացքում Թուրքիայում հայերի հանդէպ կատարուած սարսափազդու դէպքերի մանրամասնութիւններ: Այդ ամիսներին էին նաեւ դեսպանատուն հասել Ուրմիայի տեղեկագրերը, Թալեաթ ու Էնվէր նրանց իսկութիւնը ժխտելով, այն նկատել էին որպէս անմիտ չափազանցութիւններ: Այդ ընթացքում, Հ. Մորգընթաու առաջին անգամ լսել ու տեղեկացուել էր Վանայ «Շփոթութիւններ» մասին, նրանք դարձեալ յայտարարել էին, որ պատահածները «Խուժանի» ծայրայեղութիւններ էին, խոստացել անմիջապէս դադարեցնել այն: Թուրք կառավարութիւնը ջանացել էր նման տեղեկութիւնները երկար ատեն գաղտնի պահել արտաքին աշխարհից, որպէսզի հայերի բնաջնջումը կատարուելուց յետոյ միայն իմացուէր Եւրոպայում, Ամերիկայում, այլուր:

Դեսպան Հ. Մորգընթաուին յայտնի էր եղել, որ Ապրիլի վերջերին Պոլսում ձեռքարկուել էին երկու հարիւր ու ասելի մտաւորականներ ու ընկերային կարեւոր դիրքեր գրաւած նշանաւոր անձեր, որոնք ուղարկուել էին երկրի ներսերը: Ըստ դեսպանի իմացածի, նրանցից շատեր մշակույթային, ընկերային ու նիւթային տեսակետով երկրում կարեւոր դիրքերի տէր էին, որոնցից մեծ մասին Հ. Մորգընթաու անձանք ճանաչել էր: Դեսպանը նրանց կարեկցելով, դիմումնագրեր ներկայացրել Թալեաթին: Նրա հետ առանձին հանդիպումների ատեն, դեսպանի հարցումներին պատասխանած եղել, որ կառավարութիւնը երկրի ապահովութիւնը նկատի ունենալով՝ ի պահանջել յարկին ստիպուած էր եղել ձեռք առնել անհրաժեշտ միջոցառումներ: Թալեաթ ասելուց ընդհատուել էր, որ Վանի հայերը ցոյց էին տուել յեղափոխական ընդվզումներ եւ որ Պոլսոյ այդ կասկածելի անձերը, Ռուսիոյ հետ իրենց շարաբերութիւններով կարող էին Օսմանեան կառավարութեան դէմ ապստամբութիւն կազմակերպել: Թուրքիան, ամենապահով ելքն էր համարել՝ նրանց Անպարա եւ ուրիշ քաղաքներ ղրկելով: Թալեաթ ժխտել էր, որ իրենց բնակավայրերից Հայ ազգաբնակչութեան վտարումը կանխամտածուած ծրագիր էր, հաւաստել, որ հեռացուածները նեղութիւններ պիտի չկրէին:

Երկրի ներսից հասնող լուրերը մտահոգել էին Հ. Մորգընթաուին: դաշնակիցների նաւատորմիղը մինչեւ Տարտանելի նեղուցից հեռանալը, արդէն յայտնի էր եղել, որ չարաբաստ դէպքեր էին տեղի ունենում Հայկական նահանգներում: Դաշնակիցների նաւատորմիղները Տարտանելի նեղուցից հեռանալուց յետոյ՝ Անգլիան, Փրանսան, Ռուսիան այլեւս չէին կարող հայերին օգնութիւն տրամադրել: Հ. Մորգընթաու, տարբեր բովանդակութիւնների անձածկագիր հեռագրերն էր ուղար-



կել Թուրքիայում գործող Ամերիկայի Միացեալ Նահանգների հիւպատոսներին: Երկրում տեղի ունեցած դէպքերը քողարկելու համար, խիստ գրաքննութիւն էր սահմանուած: Դժուարացել էին նաեւ ուղեւորութիւնները դէպի երկրի արեւելք: Ամերիկայի առանձին հիւպատոսներ ու միսիոնարներ յաջողացրել էին ժամանել ամերիկեան դեսպանատուն: Հ. Մորգընթաուին ներկայանալով, արցունքոտ աչքերով պատմել էին անձամբ վկայ եղած զարհուրելի տեսարանների մասին, որոնցից այնքան ազդուած էին եղել, որ նոյնիսկ հիւանդացել էին:

Դեսպանատուն ժամանածներից ոմանք, ուրիշ հիւպատոսներից էլ նամակներ էին բերել, որոնց մանրամասնութիւնները հնարաւոր էր հրապարակել: Հ. Մորգընթաու, այդ բոլորից եզրակացրել էր, որ հայերի հանդէպ Թուրքերի անգթութիւնը անսահման էր: Նրանք Հ. Մորգընթաուին ասել էին, որ անյոյս է՝ մտաւորապէս 2,000,000 հայերը ջարդելէ ու անթութիւնէ փրկելը, եթէ ոչ, միայն «Միացեալ Նահանգների բարոյական ազդեցութիւն» գործադրելը: Հայերի բանազնացները Հ. Մորգընթաուին յայտարարել էին, որ եթէ ամերիկեան դեսպանատունը չկարողանար համոզել Թուրքերը «սանձ» դնելու իրենց վայրագութիւններին, ապա ամբողջ մի ցեղ սպանուելու է: Ամերիկացի ու Գանատացի միսիոնարներ եւ նոյնիսկ նրանց գերման պաշտօնակիցներ, խնդրել էին Հ. Մորգընթաուին... միջամտել: Գերման առանձին միսիոնարներ ամբաստանել էին իրենց հայրենիքը, որ այն գութ չուներ, նրանք չէին թաքցրել իրենց «նուստացումը» որպէս գերմանացիներ, մեղադրում իրենց հայրենիքը՝ նման «անմարդ» ժողովուրդի դաշնակիցը լինելուն: Իմանալով Թուրքիայում հայերի հանդէպ իրականացուած վայրագութիւնների հանդէպ Գերմանիայի չէզոք դիրք գրաւելու մասին, համոզուել էին, որ միայն Ամերիկա Միացեալ Նահանգները կարող էին ջարդերը կասեցնել:

Թալեաթ յայտարարել էր, որ որպէս պետութեան ներքին խնդիր, իբր ոչ ոք իրաւունք ունէր միջամտելու իրենց հպատակների հանդէպ կատարուած դէպքերին: Հ. Մորգընթաու խոստովանել էր, որ քանի որ եւ նման վարմունքից իր երկրի ու նրա մարդկանց շահերը չէին վնասուել, ինք ուղղակի չէր

միջամտել տեղի ունեցած դէպքերին: Արդեօք Ամերիկեան առանձին դեսպաններ իրենց երկրի շահերից չէին, որ նպաստել, թէ՛ հրահրել էին «Արաբական Գալուստ» անուան տակ երկրների քանդումը, նրանց շէնքերի ու քաղաքների կործանումը, հազար-հազար անպաշտպան մանուկների ու կանանց մահը: Իրենց շահի համար միջամտել էին ուրիշ շատ երկրների ներքին գործերին, գէնք տրամադրել հակադիր կողմերից մէկին, դրացի կողմ երկրի հանդէպ երկարամեայ տնտեսական շրջափակում իրականացնելը, իրենց շահերին հակառակող պետութիւնների հանդէպ տնտեսական պատժամիջոցներ կիրառելը, որոնցից խիստ տուժում էին նրանց մարդիկ: Այդ ի՞նչ շահերից է, որ մինչեւ հիմա էլ ժխտում են, իրենց դեսպանի նկարագրած Թուրքի կողմից իրենց իսկ հպատակների ցեղասպանութիւն կատարելը: Հ. Մորգընթաուին այցելած երկու միսիոնարներ նրան հաղորդել էին Գոնիայի զարհուրելի դէպքերի մասին, նրանց ունկնդրելուց յետոյ Հ. Մորգընթաու, ուղղակի «Բարձր Դուռ» էր գնացել: Առաջին ակնարկով տեսել, որ Թալեաթ իր վայրագ տրամադրութեան մէջ էր գտնուում: Նրա հետ այլ հարցերի մասին խօսելուց յետոյ, Գոնիայի հայերի դէպքերի վիճակի մասին էր սկսել խօսել: Հ. Մորգընթաու հազիւ իր առաջին խօսքն էր արտասանել, Թալեաթը կուռարարի վարմունք ցոյց տուել, աչքերը բոցավառած, ծնօտները սեղմած, դէպի իրեն ծռել ու կտրուկ շեշտով բացականչել՝ «Ամերիկացի՛ են անոնք: Արտայայտուելու հասարակ ձեւ էր այդ, Թալեաթը բաց էր բաց շարունակել դեսպանին ասել, որ չէին կրնար հայերուն վատահիլ, խօսքը շարունակելով ասելուց, որ դրանից բացի անոնց հանդէպ իրենց վարուելակերպը Միացեալ Նահանգների գիտնալիք բանը չէ: Հ. Մորգընթաու, նրան յայտնել էր, որ իրեն որպէս իրենց բարեկամը նկատելով հանդերձ, վրդոված է Թուրքիայում հայերի հանդէպ կատարուած վարմունքից: Թալեաթ, գլուխը օրօրելով, մերժել էր այդ մասին ասելի խօսիլ: Հայերին բարեխօսելու համար Թալեաթի հետ Հ. Մորգընթաուի տեսակցութիւնը դրական արդիւնք չէր տուել: Նա խոհեմ էր համարել մի այլ տեսակցութեան ընթացքին, Թալեաթի բարօք տրամադրութեան ժամանակ, խօսք արժարծել հայերի հարցի շուրջ, որը նրան ինքզինքից հանում էր: Նման մի ուրիշ տեսակցութեան ատեն, Թալեաթ իրեն տեսնելուց, բացել էր սեղանի գորոցը, մի բուռ հեռագրերն էր հանել:

Ինչո՞ւ համար այս դրամը մեզի չէք տար, կատակելով ասել էր:

Ի՞նչ դրամ, հարցրել էր Հ. Մորգընթաու:

Թալեաթ ցոյց տալով մի հեռագիր, ասել, որ Ամերիկայից հայերու համար խոշոր գումար են ղրկում ձեզի: Այն լաւագոյնս գործածելու համար, մեզի՝ Թուրքերու, յանձնեցէք, մենք նրանց չափ դրամի պէտք ունինք: Հ. Մորգընթաու առարկել էր, որ բան չէր ստացել: Թալեաթը հաւատացրել էր, որ դրամը պիտի գար: Ճիշտ էր Թալեաթը: Ամէն առաւօտ Պոլիս հասած հեռագիրները, մինչեւ հաս-

ցէատէրերին յանձնելը ներկայացուում էին Թալեաթին, նա բոլորը կարդում էր, նոյնիսկ եթէ երկրի դեսպանատներին ուղարկուած լինէին: Հ. Մորգընթաու չէր բողոքել, յարմար առիթ էր համարել իրեն արգիլուած նիւթի շուրջ խօսք սկսել:

Խօսակցութեան ընթացքին, Թալեաթ գոհ չէր մնացել Հ. Մորգընթաուի կողմից հայերու հանդէպ եղած շահագրգռութիւնից: Բացատրել էր, որ հայերը ուսմանի հետ մշտական յարաբերութիւնների մէջ էին: Հ. Մորգընթաու, Թալեաթի հետ վարած խօսակցութիւնից այնպէս էր տպաւորուել, որ նա էր հայերի ամէնից անողոք թշնամին, նաեւ իր օրագրին մէջ գրել էր՝ Թալեաթն է այս խեղճ մարդոց տառապանքների ամէնայ կատաղի թելադրիչը: Նա Հ. Մորգընթաուին յայտնել էր, որ այդ քաղաքականութիւնը՝ կառավարութեան պաշտօնական քաղաքականութիւնն է, եւ թէ տարագրութիւնները աճապարանքով որոշուած բաներ չէին, այլ՝ նրանք արդիւնքն էին երկար ու լուրջ խորհրդակցութեանց: Թալեաթը, լուրջ ու զայրացկոտ, մերժողական շեշտով պատասխանել էր Հ. Մորգընթաուի կողմից ի նպաստ հայերի եղած դիմումնագրերին:

«Մի օր ձեզի հետ բովանդակ Հայկական խնդրոյն վրայ խօսիլ... յետոյ էլ ցածր ձայնով Թալեաթ Թուրքերէն ասել էր՝ «Բայց այդ օրը երբեք պիտի չգայ»:

«Եւ յետոյ, դուք ինչո՞ւ համար հայերով հետաքրքրուած էք, Թալեաթը հարցրել էր մի ուրիշ Նախկինները ու հրեաները շատ լաւ են իրարու հետ: Գանգատելու ի՞նչ ունէք: Ինչո՞ւ համար չէք թողնում այդ քրիստոնեաներին մենք մեր ուզածը անենք»:

Հ. Մորգընթաու չիշատակել էր, որ Թալեաթի այդ միտքը, Թուրք մտայնութեան արտացոլումն էր: Թուրքերը չէին մտածել, որ ցեղի եւ կրօնի նկատառումներից զատ ուրիշ բաներ գոյութիւն ունեն, ինչպէս՝ մարդասիրութիւնը, քաղաքակրթութիւնը, արդարութիւնը:

Հ. Մորգընթաու պատասխանել էր, որ ինք այդտեղ չէր գտնուել Հրեայի հանգամանքով, այլ՝ իբր ամերիկեան դեսպան, եւ որ իր երկրում բնակուած են 97 միլիոն քրիստոնեաներ եւ 3 միլիոն հրեաներ: Եւ որ ինք իր տիրուած ներկայացում է եւ քրիստոնեաներին եւ հրեաներին: Աւելացրել, որ ինքը Թալեաթին դիմած չէր եղել յանուն ցեղի կամ կրօնի, այլ յանուն մարդասիրութեան:

Թալեաթ առարկել էր, որ իրենք լաւ էին վարում ամերիկացիների հետ եւ չէր հասկացել ի՞նչի համար էին գանգատուում:

«Այդ հալածանքները, պատասխանել էր Հ. Մորգընթաու, ամերիկացիների դէմ գործ դրուած անարգանք է: Անհրաժեշտ է մարդասիրական սկզբունքներով վարուել, չհիմնուել ցեղի տարբերութեան վրայ, եթէ ոչ՝ Միացեալ Նահանգները ձեզ՝ իբր բարեկամների հաւասար կողմ չեն նկատելու: Դուք արհամարում էք ամերիկացի միսիոնարները, իրենց աստարանացումի գործը մեր երկրում

# Հայց. Առաքելական Փաստօրինայի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Մուշեղեան Տաղաւարի Պատմական Հիմնարկէք

Ռիչըրտ Եւ Թովմաս Մուշեղեան Եղբայրները Հանդերձ Ընտանեօք  
250,000 Տոլար Կը Նուիրեն

## ԽԱԶԻԿ ԵՍՆՈՅԵԱՆ

Կիրակի, Մայիս 16, 2021-ին, Փաստօրինայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Փեթոյեան եւ Ծխական Խորհուրդի անդամները, սիրով կը հրաւիրեն Մեծն Լոս Անճելըսի հայու թիւերը, ներկայ ըլլալու այդ օրուայ Մուրք եւ Անմահ Պատարագին, որմէ անմիջապէս ետք տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ Մուշեղեան Տաղաւարի պատմական հիմնարկէքը եւ Արցախի հերոսներուն աղօթքի պարտէզի ծրագրին ներկայացումը:

Այդ օր Ս. Պատարագը ինչպէս նաեւ Մուշեղեան Տաղաւարի հիմնարկէք արարողութիւնը իր օրհնաբեր ներկայութեամբ պիտի նախագահէ Արեւմտեան Թեմի եւ Մեքսիքոյի Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան:

Այս առիթով անգամ մը եւս յիշենք այն բացայայտ ճշմարտութիւնը, որ գրած է հայ գրականութեան լուսապայծառ դէմքերէն անմահն Խաչատուր Աբովեան գրելով. «Ազգ մը պահողը իրարու կապող լեզուն եւ հաւատքն է»:

Ահա այս ճշմարտութեամբ է, որ մեր ժողովուրդը կրցած է այսքան դարեր ապրիլ յաւերժացած երկու սրբութիւններով, որ երկինքէն տրուած են մեզի Ս. Գրիգոր Լուսավորիչի եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի տեսիլքներէն ծնունդ առած հայ եկեղեցին եւ հայկական գիրերը:

Հայը ուր որ գացած է առաջին գործը եղած է հայկական

եկեղեցի կառուցել եւ անոր կողքին ունենալ հայկական դպրոց մը: Անոր համար է, որ հայը եկեղեցիին մէջ կը տեսնէ հայութիւնը եւ հայութեան մէջ կը տեսնէ քրիստոնէութիւնը:

Մուշեղեան Ռիչըրտ եւ Թովմաս եղբայրները այսպիսի հայաբուր եւ քրիստոնէական ջերմ մթնոլորտի մէջ հասակ առած են, մանաւանդ մեզի ծանօթ սիրելի Ռիչըրտ Մուշեղեանը, որուն ծանօթ ենք 40 տարիէ աւելի, անոր մէջ տեսնելով Աստուածասէր, բարեպաշտ եւ բարեգործի խոնարհ հոգի մը: Ան եղած է Փաստօրինայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ երկար տարիներու վարչական, ատենապետ, Թեմական, Պատգամաւորական ժողովի Պատգամաւոր եւ Թեմական Կեդրոնական Վարչութեան ատենապետ, ամբողջանուէր հայասէր քրիստոնէան: Արժանացած է Կաթողիկոսական Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի շքանշանին:

Ռիչըրտ Մուշեղեան Աստուծոյ տան համար սկաւտի պէս միշտ պատրաստ է մեծագոյն խոնարհութեամբ իր ծառայութիւնը եւ նպաստը բերելու, այս բոլորը ըրած է Աստուծոյ փառքին համար:

Հիմնարկէքի արարողութենէն ետք, ներկաները հրաւիրուած են սիրոյ սեղանի մը, միասնաբար նշելու պատմական այդ օրը եւ անձամբ լսելու Թեմիս հայրախնամ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, եկեղեցւոյ շատ սիրուած հովիւ Արժ. Տ. Սարգիս Ա.Ք. Փեթոյեանի եւ Մուշեղեան եղբայրներու խօսքերը:

## Արուեստի Բացառիկ Փառատօն

Կիրակի, Մայիս 9, 2021-ին կէսօրուայ ժամը 12:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00, Կլենտէյլի «Գրիգոր եւ Մարիամ Գարամանուկեան» երիտասարդական կեդրոնին մէջ, տեղի պիտի ունենայ յիսունէ աւելի հայ մեծանուն նկարիչներու արուեստի բացառիկ գործերու բացօդեայ ցուցահանդէս-վաճառք մը:

Մեր համայնքի պատմութեան մէջ նման տարողութեամբ եւ որակաւոր նկարիչներու, մէկ տեղ նկարչական ցուցահանդէս մը չենք ունեցած այս քաղաքին մէջ:

Արուեստագէտներու եւ կազմակերպիչ միութեան պատասխանատուներուն փափաքն է, որ այս ցուցահանդէս-վաճառքէն մէկ մաս մը պիտի նուիրուի հայրենիքի Զինուժի հօրաքանդակ համար:

Այս անմահ ձեռնարկը կազմակերպուած է Լոս Անճելըսի մէջ երեք տարիէ իվեր ծանօթ «Հայ-Ամերիկեան Արուեստի Միութեան» կողմէ, որուն արժանաւոր հիմնադիրը եւ նախագահն է՝ ողջ ԱՄՆ-ի տարածքին ապրող հայութեան քաջ ծանօթ, բազմաբեղուն արուեստի գործիչ, գրող, բանաստեղծ եւ մտաւորական գիւմրեցի Ռուբէն Գասպարեանն է, որ ծանօթ է «Գուրպան» անունով:

Մեր սիրելի «Գուրպան»ին 27 տարիէ իվեր ծանօթ ենք, Հայաստանէն Լոս Անճելըս հասնելուն պէս տակաւին տուն տեղ եւ գործ չգտած՝ կազմակերպել սկսած մշակութային եւ արուեստի նուիրուած բարձր մակարդակի ձեռնարկներ, այսպէսով անմիջապէս արժանացաւ Լոս Անճելըսի հայութեան սիրոյն եւ զնահատանքին:

Սիրելի հայրենակիցներ, եկէք բոլորս ալ միասին արդար հպարտութեամբ նշենք այս եկեղեցւոյ պայծառացման համար կառուցուելիք Մուշեղեան Տաղաւարի հիմնարկէքին ներկայ ըլլալով:

Տաղաւարի ծախսերը մեծագոյն սիրով յանձն առած են Ռի-

Այդ գործերուն մէջ իր անփոխարինելի ներդրումը ունեցաւ իր տիկինը Տիկին Էլմիրա Գասպարեանը, 17 տարի այս համայնքին մէջ իր հեռատեսիլի «Ուրախ Գիւմրի» յայտագիրով, մեծ խանդավառութիւն ստեղծած էր մեր ազգային եւ մշակութային կեանքին մէջ:

Տէր եւ Տիկ. Ռուբէն եւ Էլմիրա Գասպարեաններու, բառին իսկական իմաստով օրհնութիւն մը եղան մեր համայնքի մշակութային կեանքին մէջ: Անոնց միջոցաւ բազմաթիւ հայրենի արուեստագէտներ հրաւիրուած են Լոս Անճելըս, իրենց տաղանդներով խանդավառելու համար մեր համայնքը:

Հայաստանի, Գիւմրիի եւ Արցախի մեծ թիւով մտաւորականներ հիւրընկալուած են իրենց ջերմ ու սիրալիկ ընտանիքի մօտ:

Ահա «Հայ-Ամերիկեան Արուեստի Միութիւնը», որ երեք տարիներու ընթացքին տասէ աւելի մշակութային եւ արուեստի փառաշուք ձեռնարկներէ ետք, այս անգամ ալ Կիրակի, Մայիս 9-ին նման արուեստի հրավարութիւն մը պիտի կազմակերպէ: Միութիւնը ունի 200-է աւելի արուեստագէտ անդամներ:

Սիրով կը հրաւիրուի մեր ժողովուրդը իր հայ եւ ոչ հայ ծանօթներով եւ ընկերներով, ներկայ ըլլալու այս շքեղ ցուցահանդէսին: Կլենտէյլի «Գրիգոր եւ Մարիամ Գարամանուկեան» երիտասարդական կեդրոնը վայելելու համար արուեստագէտներու բարձրակարգ նկարները:

Մուտքը ազատ է:

ԽՃ

չըրտ եւ Թովմաս Մուշեղեան եղբայրները իրենց ընտանիքի անդամներով, եկեղեցիին 250 հազար տոլար նուիրելով:

Սիրոյ սեղանի մուտքի նուէրն է 25 տոլար:

Ձեր վարձքը հազար կատար ըլլայ Մուշեղեան եղբայրները:

**St. Gregory Armenian Church, Pasadena**

*Abp. Hovnan Derderian*  
Primate of the Western Diocese  
Will Preside Over

**The Historic Groundbreaking Ceremonies of the MUSHEGAIN PAVILION**




*And the Unveiling of the plans for the HEROES OF ARTSAKH PRAYER GARDEN Luncheon and Special Program Honoring the Mushegain Family*  
Sunday, May 16, 2021 Immediately Following Services

**ՄՈՒՇԵՂԵԱՆ ՏԱՂԱՎԱՐԻ ՀԻՄՆԱՐԿԷՔ Եւ Արցախի Հերոսներուն Աղօթքի Պարտէզի Ծրագրին Ներկայացում**

Կիրակի, Մայիս 16, 2021 Սուրբ Պատարագէն Անմիջապէս ետք

**For Reservations Please call 626-4491523**  
**DONATION \$25 - STUDENTS \$20**

**Նամակ Խմբագրութեան**

«Մասիս»-ի Փետրուար 13, 2021թ. համարի մէջ կարդացի Տիկ. Հայկանուշ Ղազարեանի յօդուածը «Ազգային գրադարանի թուայնացման շտեմարանի...» մասին:

Զարմանում եմ, որ յարգելի հեղինակը զլանում է նշել, որ Հայկ. Ակադեմիա Գրադարանի եւ Ազգային Գրադարանի գրքերի թուայնացման ծրագիրը իրականացուեց շնորհիւ Բրիտանական Գրադարանի " «Endangered Archives Programme»-ի երեք տարուայ նիւթական հովանաւորութեան: Ծրագիրը մշակուեց եւ իրականացուեց Պր. Տիգրան Զարգարեանի օրօք: Եթէ յօդուածը այդ յղումը կատարած լինէր, մեծ սիրով այն կը փոխանցէի Բրիտանական Գրադարանի «Endangered Archives Programme»-ի տնօրինութեան: Վստահ եղէք շատ շնորհակալ պիտի լինէին:

Դկ. Տէր Ներսէս (Վրէժ) Ներսէսեան  
Բրիտանական Գրադարանի  
Հայկական Բաժանմունքի  
Տնօրէն, 1975- 2012թ.



NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

MEMBER

**Garine Depoyan**

626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepoyan@gmail.com

# Կասպեան Նաւթն ու Կազը եւ Խաղաղութեան Փնտռոււքը Տարածաշրջանին Մէջ



## ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Կասպից ակազանը (ծանօթ թէ՛ իբրեւ ծով եւ թէ՛ իբրեւ լիճ) աշխարհի մեծագոյն ջրամբարն է՝ 386.400 քառակուսի քիլոմէթր տարածութեամբ. այս գրութեան մէջ պիտի պահենք անոր ծով անուանումը: Կասպից ծովը հիւսիս-արեւելքէն սահմանակից է Ղազախստանին, հարաւ-արեւելքէն՝ Թուրքմէնիստանին, հարաւէն՝ Իրանին, հարաւ-արեւմուտքէն՝ Ատրպէյճանին, իսկ հիւսիս-արեւմուտքէն՝ Ռուսիոյ: Այս երկիրներուն միջոցով, անիկա կը կապուի աւելի լայն շրջաններու հետ. արեւմուտքէն՝ հարաւային Կովկասին, արեւելքէն՝ Կեդրոնական Ասիոյ, հարաւէն՝ Միջին Արեւելքի եւ հիւսիսէն՝ Եւրասիոյ: Բացի Իրանէն եւ Ռուսիայէն, Կասպից ծովու միւս երեք երկիրները ծովային ելք չունին, որովհետեւ Կասպից ծովը ինքնին փակ տարածք է:

Այս շրջանը իր աշխարհաքաղաքական յատուկ կարեւորութիւնը կը ստանայ թէ՛ իր դիրքին բերումով՝ Եւրոպայի եւ Կեդրոնական Ասիոյ միջեւ, եւ թէ՛ նաւթի ու կազի մեծ պաշարներ ունենալուն պատճառով: Իսկ այդ պաշարները դէպի միջազգային շուկաներ փոխադրութեան անհրաժեշտութիւնը, աշխարհաքաղաքականօրէն կարեւոր կը դարձնէ նաեւ շրջապատի երկիրներուն՝ Վրաստանի, Հայաստանի, Թուրքիոյ, Իւզպէթիստանի, Աֆղանիստանի, Հնդկաստանի եւ Փաքիստանի աշխարհագրական դիրքերը:

Հոս կ'արժէ փակագիծ մը բանալ եւ փորձել բնորոշել «աշխարհաքաղաքականութեան» գործօնը, որ վճռորոշ դեր կը խաղայ երկիրներու եւ ժողովուրդներու ապագային եւ գոյապայքարին մէջ: Աշխարհաքաղաքական գործօնը ընդհանրապէս կը վերաբերի երկրի մը աշխարհագրական դիրքին ունեցած ազդեցութեան՝ անոր արտաքին քաղաքականութեան վրայ եւ անոր փոխներգործութեան այլ պետութիւններու հետ յարաբերութեան ընթացքին: Բնակչութեան թիւը, տնտեսութիւնը եւ զինուորական հզօրութիւնը նոյնքան կարեւոր են, բայց անոնք յարափոփոխ են. մնալունը աշխարհագրական դիրքն է: Իսկ երբ տուեալ երկիր մը հարուստ է նաեւ ուժանիւթի աղբիւրներով՝ նաւթով ու կազով, կը բազմապատկուի նաեւ անոր աշխարհաքաղաքական կարեւորութիւնը:

Եւ այդպէս է, որ կը շեշտուի աշխարհաքաղաքական կարեւորութիւնը Կեդրոնական Ասիոյ եւ Կասպից ծովու խորհրդային նախկին

հանրապետութիւններուն, ուր կը գտնուին նաւթի եւ կազի մեծ պաշարներ:

Կասպից ծովուն մէջ յայտնաբերուած նաւթին պատմութիւնը շատ աւելի հին է, քան անոր սահմանակից երկիրներունը: Մերձափնեայ առաջին նաւթահորերը փորուած են 19-րդ դարուն, երբ կասպեան նաւթի արդիւնաբերութիւնը կը կազմէր աշխարհի նաւթի մատակարարման շուրջ կէսը, իսկ միւս կէսը հիմնականօրէն կու գար Միացեալ Նահանգներէն:

Այսօր, կասպեան տարածաշրջանը կը պարունակէ նաւթի եւ կազի աշխարհի մեծագոյն հորերուն մէկ մասը: Ղազախստանի մէջ 2000-ին յայտնաբերուած Քաշականի նաւթի հանքավայրը կը նկատուի վերջին 50 տարիներու աշխարհի մեծագոյն յայտնաբերումը եւ ընդհանրապէս մերձափնեայ մեծագոյն հանքը Միջին Արեւելքէն դուրս: Իսկ Ատրպէյճանի «Շահ Տէնիզ» կազի հանքավայրը կը նկատուի Կասպից ծովու մեծագոյնը եւ աշխարհի 20 մեծագոյններէն մէկը:

2018-ի գնահատումով, Կասպից ծովու տարածքը կը պարունակէ 48 միլիարդ տակառ նաւթ եւ 9 թրիլիոն խորանարդ մեթր բնական կազ: Մասնագէտներ, սակայն, կը պնդեն որ այս թիւերը կը ներկայացնեն օգտագործելի պաշարներուն ջնջին համեմատութիւնը եւ ապագային կրնան նոր յայտնաբերումներ կատարուիլ: Բաղդատութեան համար միայն, կ'արժէ նշել, որ Միջին Արեւելքի հորերը, ներառեալ Իրանը, կը պարունակեն փաստուած աւելի քան 836 միլիարդ տակառ նաւթ եւ շուրջ 75,5 թրիլիոն խորանարդ մեթր կազ (Իրան առանձինն ունի 158 միլիարդ տակառ նաւթ եւ 29.6 թրիլիոն խորանարդ մեթր կազ):

Ճիշդ է որ մեծ պետութիւնները եւ ուժանիւթի ընկերութիւնները միշտ նաւթի եւ կազի նոր աղբիւրներ փնտռելու վիճակի մէջ կը գտնուին, սակայն Կասպից ծովու երկիրները քաղաքական եւ տնտեսական միջազգային մրցակցութեան թիրախ դարձած են նաեւ այլ պատճառներով: Նախ՝ տարածաշրջանի յետխորհրդային երկիրները տարիներ շարունակ լքուած էին խորհրդային իշխանութեան օրերուն եւ խիստ կարիքը ունէին արհեստագիտութեան եւ դրամագլուխի՝ իրենց բնական հարստութիւնները շահագործել կարենալու համար: Երկրորդ, Կասպից ծովը փակ տարածք է եւ պէտք ունի քարիւղատար ու կազատար

խողովակներու՝ դրացի երկիրներէ անցնող միջանցքներով իր բնական հարստութիւնները արտածելու համար: Խորհրդային Միութեան կազմալուծման պահուն, կասպեան շրջանէն, կամ ընդհանրապէս խորհրդային տարածքներէն, նաւթի ու կազի խողովակները կ'ուղղուէին միայն դէպի հիւսիս՝ Ռուսիա: Այս խողովակներուն արդիականացումը, կամ նախընտրաբար նորերուն կառուցումը եւ նոր ուղղութիւններու որոնումը կը դառնար հիմնական: Հիմնական կը դառնար նաեւ քաղաքական կաշուութեան հաստատումը՝ տարածաշրջանին քաղաքական ու ազգային առկախ բոլոր հարցերը լուծելու ճամբով:

Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, արտաքին ուժեր, մօտիկ թէ՛ հեռու, չանկարծ կը գգան, որ Կասպից ծովուն նաւթի եւ կազի նոր աղբիւրները մատչելի են նաեւ իրենց՝ անշուշտ միշտ նկատի առնելով ռուսական ազդակը:

Յետխորհրդային Ռուսիան մեծ ճիւղ կը թափէ իր քաղաքական ազդեցութիւնը պահելու կասպեան թէ՛ խորհրդային նախկին բոլոր երկիրներուն մէջ՝ ստեղծելով տնտեսական պարապ մը, զոր կը փորձեն լեցնել Միացեալ Նահանգները, Չինաստանը, Եւրոպական Միութիւնը, նոյնիսկ՝ Թուրքիան ու Իրանը: Ռուսական այս քաղաքականութիւնը կտրուկ կը փոխուի 2000-ական թուականներուն, երբ տնտեսական գործօնը կը դառնայ նոյնքան հական որքան քաղաքականը: Օրինակ, երբ Ռուս-Ուքրանական 2006-ի կազի տագնապէն ետք ծնունդ կ'առնէր կասպեան շրջանը Եւրոպայի միացնող եւ Ռուսիան ու կազատարին գաղափարը, եւ հետագային առնուազն կը սկսի իրականութիւն դառնալ Պաքուէն Եւրոպա գացող Հարաւային միջանցքի ծրագիրը, վախճալով, որ այս ծրագիրները զինք դուրս կրնան հանել տարածաշրջանէն, Ռուսիան՝ թէ՛ իբրեւ պետութիւն (նաեւ զինուորապէս) եւ թէ՛ իբրեւ ուժանիւթի ընկերութիւններ, տնտեսապէս կը սկսի ներկայութիւն դառնալ տարածաշրջանի բոլոր երկիրներուն մէջ:

Միւս կողմէ, նկատի առնելով անոր տնտեսական աճող հզօրութիւնը եւ ուժանիւթի աղբիւրներու մնալուն ծարաւը, կասպեան շրջանը Չինաստանի համար կը նկատուի գրաւիչ շուկայ մը, որ ներդրումներու պարարտ հող կը տրամադրէ: Ինչ կը վերաբերի Միացեալ Նահանգներուն եւ ընդհանրապէս Արեւմուտքին, անոնք ընդհանրապէս մասնակից են ուժանիւթի առնչուող տարբեր ծրագիրներու, եւ հակառակ կարգ մը երկիրներու ցանկութեան, Կասպից ծովը եւ անոր անմիջական շրջանները չեն գտնուիր ամերիկեան ուղղակի վերահսկողութեան տակ, ինչպէս է պարագան, օրինակ, Պարսից ծոցին: Շատ հաւանաբար, աշխարհի այլ շրջաններէ աւելի, Կասպից եւ Կեդրոնական Ասիոյ երկիրները մնան աշխարհաքաղաքական բազմաբեւեռ գօտիի մէջ:

Թէեւ Իրան աշխարհի մեծագոյն նաւթ արտադրող երկիրներէն մէկն է եւ կը նկատուի բնական կազ արտադրող աշխարհի երկրորդ մեծագոյն երկիրը, ան կը շահարկէ կասպեան հարստութեան մէկ փոքր բաժինը միայն: Իրանի աշխարհաքաղաքական եզակի դիրքը սակայն՝ Կասպից ծովուն եւ Պարսից ծոցին միջեւ եւ իր ծովային ելքերով, գոյն կը դարձնէ տարանցումի կարեւոր երկիր մը:

Երբ կասպեան երկիրներու աստղը կը սկսի փայլիլ իբրեւ ուժանիւթ արտադրողներ, Թուրքիա հաշիւ կ'ընէ, որ կրնայ շահագործել իր էթնիք եւ մշակութային կապերը՝ նկատի առնելով, որ ազերիները, թիւրքմէները, դազախները եւ իւզբէքները բոլորը թրքական ժողովուրդներ են, եւ իբրեւ յառաջացած երկիր, ինք կրնայ ազդեցութիւն ունենալ շրջանի երկիրներուն վրայ, սակայն, ի յայտ կու գայ, որ կասպեան երկիրները կը նախընտրեն գործ ունենալ ռուս, չինացի, ամերիկացի կամ եւրոպացի ներդրողներու հետ, երբ մանաւանդ խօսքը կը վերաբերի ուժանիւթի մարզին մէջ ներդրումներու: Այս երկիրներէն միայն Ատրպէյճանը բացառութիւն կը կազմէ, որովհետեւ հոն Թուրքիա կը յաջողի ներդրումներ կատարել մասնաւորաբար Պաքու-Թիֆլիս-ձէյջհան քարիւղատար խողովակի կառուցման մէջ եւ ատրպէյճանական նաւթը հասցնել միջերկրականեան իր ծովափը, նաեւ՝ Հարաւային Կազախին Միջանցքի ծրագրին մէջ, որ Վրաստանի եւ Թուրքիոյ վրայով, ատրպէյճանական կազը պիտի հասցնէ Եւրոպա:

Եւրոպական Միութիւնը էապէս կը մնայ կասպեան նաւթով եւ կազով շահագրգռուած կողմ մը, որովհետեւ մեծ կարիքը ունի անոնց եւ գուրկ է աղբիւրներէ: Ինչպէս նշեցինք, ռուսեւեռքանական կազի տագնապէն ետք, ուժանիւթի աղբիւրներու բազմազանութիւնը Եւրոպայի համար կը դառնայ հրամայական: Եւրոպա իր աչքերը կը դարձնէ դէպի կասպեան երկիրները, բայց հիմնականօրէն կը կեդրոնանայ Ատրպէյճանի վրայ: Պաքու-Թիֆլիս-ձէյջհան քարիւղատար խողովակին բացումը 2006-ին, կը նպաստէ Եւրոպա-Ատրպէյճան ուժանիւթի մարզի մէջ համագործակցութեան՝ ճամբայ բանալով նաեւ Ատրպէյճանի վրայով Ղազախստանէն նաւթ ներածելու կարելիութեան: Իսկ Կազախին Հարաւային Միջանցքի ծրագիրը, որ կ'առաջադրէ ատրպէյճանական կազով հասցնել Եւրոպա, աւելի եւս կը խթանէ Եւրոպական Միութեան հետ Ատրպէյճանի կապը:

Կը մնայ նշել, որ կասպեան շրջանով շահագրգռուած բոլոր կողմերը հետամուտ կը թուին ըլլալ տարածաշրջանին մէջ քաղաքական ընդհանուր կաշուութեան ստեղծման եւ տագնապներու լուծման՝ առեւտուրի զարգացման, ուժանիւթի աղբիւրներու ապահովման, եւ այս մարզին մէջ հսկայ ներդրումները պաշտպանելու առաջադրանքներով:

www.civilnet.am

Ձեր Ծանուցումները Կստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680

### Ինչ է Կատարում Ալիեի Յեռ

Շարունակում է 2-էջ

ուր էլ չի, թէ որտեղից են արձակուել դրանք, կարելու է հիմա ուսանել յղուած հարցն է՝ «ինչու՞ են ընդդէմ Ատրպէյճանի կիրառուել ուսական հրթիռներ»։ Կարող էր Ալիեը ինքնաբերաբար պարակալին փութիւնի հետ այս տոնով «հաշիւներ մաքրելու» թեմատեղծել-վստահաբար՝ ոչ։ Ուրեմն, Ալիեը ստիպուած է եղել դա անել։

Անկեղծ խոստովանութիւնների շարքից է Ալիեի արձանագրումն այն մասին, թէ որոշ երկրներ իրեն տապալելու ծրագիր են մշակել։ «Իմ դէմ չեղաշրջման փորձեր են եղել։ 2003թ. «Ժողովրդական ճակատ-Մուսավաթ» խմբակցութիւնը՝ «Ազադլըզ» հրապարակում, ցանկանում էր ռազմական չեղաշրջում կազմակերպել, բայց դա չիրականացաւ, եւ ժողովուրդը չաջակցեց դրան։ 2005թ.-ին նրանք ցանկանում էին «նարնջագոյն լեզափոխութիւն» կազմակերպել Ատրպէյճանում։ Նրանք արդէն ունէին նարնջագոյն թեկապներ։ Բերել էին նարնջագոյն վրաններ։ Ո՞րն էր նպատակը։ Նպատակը դաւաճաններին իշխանութեան բերելն էր, Ղարաբաղը յանձնել հայերին եւ գլխաւորել Ատրպէյճանը», - ասել է Ալիեան աւելի վաղ, ռազմական աւարի պարկի բացման ժամանակ։

Նրա խօսքով՝ «որոշ արտասահմանեան մայրաքաղաքներում որոշուել էր տապալել իշխում Ալիեին»։ «Այն ժամանակ «նարնջագոյն լեզափոխութեան» շրջան էր։ Յեղափոխութիւններ տեղի էին ունենում այստեղ եւ այնտեղ։ Այժմ բոլորը կարող են տեսնել, թէ ինչ է տեղի ունեցել այս լեզափոխութիւնների հետ։ Երկրները գտնուում են անմխիթար վիճակում, չեն կարողանում դուրս գալ ճգնաժամից, ճգնաժամը տեւում է 15-17 տարի։ Այս երկրները դժուար թէ դուրս գան ճգնաժամից», - ասել է Ալիեը։

Այնուհետեւ պարզուեց, որ Ալիեը նեղացել է ԱՄՆ նոր վարչակազմից-Ատրպէյճանը դեռ որեւէ

ուղերձ չի ստացել ԱՄՆ նոր վարչակազմից՝ Յունուարից, Ապրիլի 13-ին կայացած համաժողովում ասել է Ատրպէյճանի նախագահը։ Նա նշել է նաեւ, որ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենն աւելի վաղ գանգել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանին. «Ես չգիտեմ՝ ինչի մասին են նրանք խօսել, սակայն հաւասարակշռութիւնը խախտուել է։ Ես չեմ ասում, որ նրանցից զանգ եմ սպասում, սակայն նրանք ներկայացնում են Միւսկի խումբը։ ԱՄՆ-ն պէտք է հաւասարակշռուած մտեցում ցուցաբերի»։ Նրա խօսքով՝ մինչ օրս ԱՄՆ վարչակազմից ստացուած միակ հաղորդագրութիւնը եղել է Նովրուզի կապակցութեամբ ԱՄՆ նախագահ ձօ՞՞՞՞ Պայտընի շնորհաւորանքը։

Մինչեւ վերջերս ԵԱՀԿ Միւսկի խմբի գործունէութիւնը դարաբարեան կարգաւորման ողջ պատմութեան ընթացքում անիմաստ ու անարդիւնախէտ համարող Ալիեը, որը նաեւ վերջին ամիսներին էր անընդմէջ կրկնում, թէ ԼՂ խնդիրը լուծուել է եւ Ղարաբաղի կարգավիճակի հարցը օրակարգից դուրս է եկել, ահա նոյն համաժողովում յայտարարել է, թէ Պաքուն ակնկալում է, որ ԵԱՀԿ Միւսկի խումբն առաջարկներ կը ներկայացնի տարածաշրջանում խաղաղութիւն հաստատելու համար։ «Ես յուսով եմ՝ նրանք շուտով կ'այցելեն մեզ որոշ առաջարկներով, եւ մենք ուշադիր կ'ուսումնասիրենք այդ առաջարկները», - ասել է նա՝ իր երբեմնի խօսքերն այս տեսանկիւնից էլ խմբագրելով։ Նա պարզաբանել է, թէ չի պնդում, որ ԵԱՀԿ Միւսկի խումբն այլեւս անհրաժեշտ չէ՝ նոր պայմաններում նրանք կարող են աջակցել տարածաշրջանում խաղաղութեան յետագայ հաստատմանը։ Նրա խօսքերով՝ Միւսկի խումբը կարող է հետկոնֆլիկտային իրավիճակում դերակատարութիւն ունենալ, բայց «ոչ թէ որպէս հակամարտութիւնը կարգաւորող խումբ, այն արդէն կարգաւորուած է», այլ Հայաստանի

հետ խաղաղութեան համաձայնագրի հասնելու առումով։

Ալիեան ասել է, թէ միջազգային խաղաղողները կարող են աջակցել սահմանների դեմարկացիային, ապառազմականացմանը, փոխգործակցութեան հաստատմանը։ Ըստ ամենայնի, Ալիեը քաջատեղեակ էր, որ նախապատրաստուած է ԵԱՀԿ Միւսկի խմբի համանախագահների համատեղ յայտարարութիւն՝ չնայած այն բանին, որ նա 5 ամիս անդադար կրկնում էր, որ ԼՂ խնդիրը լուծուած է, Միւսկի խումբը անպէտք, անարդիւնաւէտ ձեւաչափ էր, իսկ եռակողմ յայտարարութեան ստորագրումից մի քանի օր անց Պաքու այցելած համանախագահներին նա ոչ աւել, ոչ պակաս տեսախցիկների առջեւ մօտաւորապէս այս տոնով ասաց. «Ես ձեզ չեմ հրաւիրել, չգիտեմ ինչու էք եկել, բայց որ եկել էք՝ կը լսեմ»։

Ինչեւէ, Ապրիլի 13-ի երեկոյեան հրապարակուեց ԵԱՀԿ Միւսկի խմբի համանախագահների համատեղ յայտարարութիւնը, որում նրանք ողջունեցին տարածաշրջանի տրանսպորտային ապաշրջափակմանն ուղղուած կառուցողական քննարկումների շարունակական առաջընթացը, սակայն կողմերին յիշեցրեցին, որ հարկաւոր են լրացուցիչ ջանքեր՝ դեռեւս մնացած հարցերը լուծելու եւ երկարաժամկէտ խաղաղութեանը նպաստող փոխվստահութեան մթնոլորտ ստեղծելու համար. «Դրանք ներառում են հարցեր, որոնք, մասնաւորապէս, վերաբերում են բոլոր ռազմագերիների եւ այլ ձերբակալուածների վերադարձին՝ միջազգային մարդասիրական իրաւունքի դրոյթներին համապատասխան, հակամարտութեան շրջանների արդիւնաւէտ ակնազեղման համար անհրաժեշտ բոլոր տուեալների փոխանակմանը, Լեռնային Ղարա-

բաղ մուտքի սահմանափակումների վերացմանը, այդ թւում՝ միջազգային մարդասիրական կազմակերպութիւնների ներկայացուցիչների համար, կրօնական եւ մշակութային ժառանգութեան պահպանմանը եւ պաշտպանութեանը, ինչպէս նաեւ հակամարտութիւնից տուժած համայնքների, մարդկանց միջեւ վստահութեան ամրապնդման այլ միջոցառումների համար անմիջական շփումների եւ համագործակցութեան խթանմանը»։ Միջնորդները շեշտեցին, որ յատուկ ուշադրութիւն պէտք է դարձնել վերջնական համապարփակ եւ կայուն կարգաւորման ձեռքբերմանը՝ կողմերին լաւ յայտնի սկզբունքների հիման վրայ եւ կոչ արեցին կողմերին առաջին իսկ հնարաւորութեան դէպքում վերսկսել բարձր մակարդակի քաղաքական երկխօսութիւնը համանախագահների հովանու ներքոյ։ Միջնորդները շեշտեցին ուղղակի երկկողմ խորհրդատուութիւններ կազմակերպելու իրենց առաջարկը, որպէսզի կողմերը համատեղ վերանայնեն եւ համաձայնեցնեն իրենց առաջնահերթութիւնները ներկայացնող կառուցուածքային օրակարգը՝ առանց նախապայմանների։

Ոչ դիւանագիտական լեզուով ասած՝ ՌԴ-ն, ԱՄՆ-ն ու Ֆրանսիան Ատրպէյճանին յիշեցրեցին, որ հակամարտութեան համապարփակ կարգաւորում են ակնկալում՝ «յայտնի սկզբունքների հիման վրայ», որոնց շարքում է՝ «ազգերի ինքնորոշումը», ինչպէս նաեւ ակնկալում են վերսկսել բարձր մակարդակով բանակցութիւններ՝ «համանախագահների հովանու ներքոյ», այսինքն՝ վերջ տալ Ռուսաստան-Թուրքիա մենաշնորհային դարձած «միջնորդական» սեպարատ գործունէութեանը։

«ԱՌԱՒՕՏ» ՕՐԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
 \$ 125,00 (Air Mail) for Canada.  
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel :-----  
 Email: -----

**Sous Chef and Cook for Lebanese Kitchen in Studio City, CA**



An authentic Modern Mediterranean Restaurant and Hookah Lounge is looking for a Sous Chef and a Cook for a Lebanese kitchen.  
 Job Type: Full-time

**REQUIREMENTS / QUALIFICATIONS:**


- Minimum 5 years of experience.
- Knowledge in a Lebanese / Mediterranean kitchen is **MUST**: Cold & hot Appetizers, Salads, Soups, Shawarmas & Wraps, Deserts.
- Knowledge in Kabob marination and cooking is preferable.
- Inventory Management skills. • Detail orientation and cool under pressure.
- A self-motivator, who works clean and stays organized.
- Respect for coworkers and a team player mentality is essential.
- A desire to learn, grow and be a future leader also encouraged.

Starting \$20-25 / hour

**For mor Information**  
 Phone: (323) 468-0056  
 Email: suren@oliveandgrill.com  
 Address: 12229 Ventura Blvd, Studio City, CA, USA

### Ոչ եւս է Արա Պոյաճեան

Խոր ցաւով իմացանք թորոն-  
թոյի ազգային անձնաւորութիւններէն  
Արա Պոյաճեանի մահը, Ապրիլի  
13ին յետ երկարատեւ անողոք հիւանդու-  
թեան: Յուղարկաւորութիւնը տեղի  
ունեցած է Ապրիլի 17ին, թորոն-  
թոյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ:



Արա Պոյաճեան ծնած է Պէյրութի  
1952ին: Գանատա փոխադրուելէն  
ետք երկար տարիներ եղած է Ս.Գ. Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչը «Հայաստան Համա-  
այակական Հիմնադրամ»-ի հոգաբարձուներու խորհուրդին մէջ եւ  
Հիմնադրամի թորոնթոյի մասնաճիւղի գանձապահը: Եղած է գանատա-  
տահայոց թեմական խորհուրդի ատենապետ եւ Նոր Սերունդ Բարեսիրական Հիմնարկի հիմնադիր անդամ:

Այս տխուր առիթով ՍԳՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը, Նոր Սերունդ Մշակութային Միութիւնն ու Հայկական կրթական Բարեսիրական Միութիւնը իրենց խորագրայց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աչրիին, գաւակներուն, քրոջ, եղբոր եւ համայն հարազատներուն:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Դամասկոսի Հնչակեան կուսակցութեան Վարիչ Մարմնի երբեմնի ատենապետ ընկ. ՍՈՂՈՄՈՆ ԵԼԷՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Լուիզիանա նահանգի Baton Rouge քաղաքէն ընկերուհի Ազատուհի Մութաֆեան եւ գաւակները՝ Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Նորա Մութաֆեան, Տէր եւ Տիկ. Սագո եւ Հուրի Մութաֆեան, Տէր եւ Տիկ. Չէտ եւ Մարալ էլուտ իրենց խորագրայց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, ինչպէս նաեւ Նալպանտեան ընտանիքի հարազատներուն եւ Դամասկոսի Հնչակեան կուսակցական շրջանակին:

Առ այդ \$500 կը նուիրեն «Մասիս»ին:

### Յինի Սորգընթաուի Յուշերի Պատումներից

#### Շարունակուած էջ14-էն

գնահատուած է: Իրենք նիւթապաշտներ չեն, այլեւ համոզուած այլասէրներ եւ արդարութիւնը ու քաղաքակրթութիւնը տիեզերականօրէն տարածողներ: Ասում էք, որ պատերազմում յաղթանակած լինելու դէպքում ամբողջ աշխարհը պիտի արհամարհէ: Համոզուած եմ, որ թուրքիան ամբողջ աշխարհի կարծիքի դիմաց պիտի գտնուի, մանաւանդ՝ Միացեալ Նահանգների, շարունակելով խօսքը աւելացրել:

Եւ մեր ժողովուրդը երբեք պիտի չմոռնայ այս ջարդերը, այս գարշելի եւ կանոնաւոր քանդումը թուրքիայի քրիստոնեաներուն: Իբր ոճրագործներ պիտի նկատէ նրանց, որոնք պատասխանատուներն են: Դուք պիտի չկարողանաք խուսափել այդ պատասխանատուութիւնից, ասելով, թէ՛ ձեր երկիրը շարժած է ներքին գործոց նախարարի հանգամանքով եւ երբեք իբրեւ թալեաթ:

Հ. Մորզընթաուի դիտողութիւնները վիրաւորական չէին թուացել թալեաթին, չէին այլափոխել նրան, անշունչ էակի նման լսել էր խօսակցին: Շրջանցելով դեսպանի առարկուածները, թալեաթ մի ուրիշ հանգամանքի էր անդրադարձել:

«Հայերը, ասել էր նա, մերժել էին իրենց գէնքերը յանձնել, Վանում ու Ջէյթուում դիմադրեցին իշխանութեանը, նրանք ուսանելի դաշնակիցներն են: Ինզիրնիս պաշտպանելու համար միակ միջոց մը կայ՝ տարագրութիւնն է այդ:»

«Ենթադրեմք, թէ՛ մի քանի հայերդաւանձանած էին ձեզի դէմ, այդ պատճառ չէ, որ դուք ամբողջ ցեղը փճացնէք, կիներն ու մանուկները չարչարէք, աւելացրել էր Հ. Մորզընթաուն:

«Այդ անխուսափելի է, պատասխանել էր թալեաթը:

Թալեաթը, նոյն պատասխանն էր տուել «Պերլինէր Թակէպրլաթ»-ի թղթակցին, երբ նա նման հարցումն առել էր իրեն:

«Մեր երեսին են տալիս, թէ մենք տարբերութիւն չենք դնում անմեղ ու մեղաւոր հայերի միջեւ, այդ անկարելի էր, որովհետեւ այսօրուայ անմեղները՝ վաղուան յանցաւորները պիտի լինեն:

Թալեաթին հաճոյ չէր եղել այդ խնդրի շուրջ խօսելու, որովհետեւ դեսպանատան այն պաշտօնեան որ կողմերի միջեւ գրոյցների թարգմանի պաշտօնն էր կատարում՝ Հայ էր եղել:

Թալեաթ Հ. Մորզընթաունին լուր էր ուղարկել, հարցնելով իրեն առանձին ընդունել չէ՞ր կարող, քանի որ ցանկացել էր հիմնապէս խօսել Հայկական հարցի մասին, յայտնելով նաեւ ո՞վ պիտի լինէր իր թարգմանը: Տեսակցութիւնը տեղի էր ունեցել երկու օր յետոյ, կարծես նախախնամութեան ընձեռած դիպուածով էր, որ Հ. Մորզընթաունն իր վերջին այցելութիւնից յետոյ կտրել տուած լինէր մօրուքը: Դահլիճ մտնելուց յետոյ, թալեաթ հեզմանքով ասել՝ «Երիտասարդ էք դարձել, այնքան երիտասարդ, որ ձեզանից այլեւս խրատ, խորհուրդ չեմ կրնար հարցնել, ինչպէս որ երբեմն անում էի»:

«Ես մօրուքս կտրել տուի, պատասխանել էր Հ. Մորզընթաուն, որովհետեւ հայերուն հանդէպ ձեր պատճառած ցաւը բոլորովին ճերմկացուցին զայն:

Խօսակցութիւնը սկսելուց առաջ, թալեաթ յայտարարել էր:

«Ես խնդրել էի այսօր գալ, փափաքելով, որ ձեզի բացատրէի հայերի հանդէպ մեր վարմունքը: Այն հիմնուած է երեք կէտերի վրայ:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱԼՊԵՐ ՄԻՆԱՍԵԱՆԻ մահուան առիթով Տիար Ասատուր Կիւզեթեան իր խորագրայց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն:

Առ այդ \$200 կը նուիրէ «Մասիս»ին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱԼՊԵՐ ՄԻՆԱՍԵԱՆԻ մահուան առիթով Տիկ. Շաքէ Պալըքճեան իր խորագրայց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն:

Առ այդ \$100 կը նուիրէ «Մասիս»ին:

Նախ՝ հայերը հարատացած են թուրքերուն կորուստով, անոնք որոշած են մեր տիրապետութիւնից բաժնուրի ու անկախ պետութիւն ստեղծել եւ որ բացէ ի բաց օգնած են մեր թշնամիներին, կովկասի մէջ օժանդակած ուսերուն, որը պատճառ հանդիսացած մեր ձախողանքներին: Անդառնալի որոշում ենք տուած, պատերազմի վախճանէն առաջ նրանց անգոր դարձնել:

Հ. Մորզընթաուն գրում է, որ ինք կարող էր հերքել այդ առարկուածների իւրաքանչիւրը: Ճարտարաբուեստական կարողութեան տեսակէտից է հայերի գերազանցութեան առաւելութիւնը՝ ծոյլ ու սահմանափակ թուրքերի վրայ: Հայերի առեւտրական մրցակցութիւնը քանդելու համար հայերին ջարդելու գաղափարը թուրքերի կողմից արծարծուած հասարակ գաղափար չէր: Նրանց գլխաւոր ամբաստանութիւնն էր, որ հայերը դաւաճանած էին թուրքերուն եւ գործակցած իրենց թշնամիների հետ: Հայերը երկար տարիների ընթացքում Եւրոպական պետութիւններին էին դիմել՝ գողութիւնների, սպանութիւնների ու թուրքերի թշնամական գործողութիւնների դէմ իրենց պաշտպանելու համար: «Հայկական Հարցը» ցեղային բոլոր վէճերի նման հետեւանք էր երկար դարերի անարդարութիւնների եւ վատ վարմունքների: Դրա լուծումը կարող էր լինել ընդունել կառավարական օրէնսդրութիւն՝ հիմնուած բոլոր քաղաքացիների հաւասարութեան եւ որ ոճրագործները դատուէին որպէս պարզ անհատներ, ոչ թէ նկատի ունենային նրանց ազգային ու կրօնական պատկանելիութիւնը: Հ. Մորզընթաուն երկար խօսել էր թալեաթի հետ նման խնդիրների շուրջ:

Թալեաթ առարկել էր, որ նշանակութիւն չունէր փաստարկներ ներկայացնելը, աւելացրել,

«Թուրքիան, հայերի երեք չորրորդի վիճակը արդէն «վերջացուցած» է, այլեւս ո՛չ Բաղէշի, ո՛չ Վանի եւ ոչ էլ էջրում քաղաքի մէջ Հայ կայ: Երկու ցեղերի միջեւ ատելութիւնը բուռն է, մենք պարտաւոր ենք կարգադրել նրանց գործը, թէ՛ ոչ ստիպուած ենք վախենալ նրանց վրէժխնդրութիւնից:

Հ. Մորզընթաուն իր չուշերում յայտնել էր, որ պետութեան «Ներքին Գործերի Նախարար» թալեաթ, մարդասիրական տեսակէտից երբեք կարեւորութիւն չէր տուել Հայկական դէպքերին:

Նիւթական կորուստների մասին խորհէիք, ասել էր Հ. Մորզընթաուն. հայերն են ապահովում երկրի բարգաւաճութիւնը, նրանք երկրի ճարտարաբուեստականների մեծ մասն են կազմում ու երկրի ամէնայ խոշոր հարկատուներն են: Եթէ հայերը ջնջէիք ի՞նչ պիտի ստանայիք: Թալեաթ պատասխանել էր, որ իրենք արհամարհում են տնտեսական վնասները, եւ որ իրենք հաշուել էին երկրի վնասները,

որոնք 5 միլիոն ոսկիէն աւելի չէին լինի, այն մտահոգութիւն չէր պատճառում իրենց: Թալեաթ շարունակել էր. որ դեսպանին խնդրել էր իր մօտ գալ՝ նրան հաղորդելու, որ Հայկական հարցերի շուրջ որոշումներ առնուած են, եւ ոչ մէկ բան կարող էր այն փոխել: Իրենք, Անատուրի մէջ Հայ չէին ուզում տեսնել: Հայերը կարող են «Անապատի մէջ ապրել, բայց երբեք ուրիշ տեղ»:

Հ. Մորզընթաուն, երեք տարբեր առիթներով թալեաթին ասել էր՝ «Դուք մեծապէս կը սխալիք»:

«Այո, շատ սխալներ ենք գործում, ասել էր թալեաթը, գլուխը թօթուելով պատասխանել, որ երբեք չէին ցաւի անոնց համար:

Այնուհետեւ, Հ. Մորզընթաուն թալեաթի հետ բազմաթիւ խօսակցութիւններ էր ունեցել Հայկական հարցերի շուրջ, սակայն երբեք չէր կարողացել ազդել նրա վրայ: Հայերի հարցը թալեաթի սրտում խորը հետք էր թողել, նրանց հանդէպ ատելութիւնը գնալով աւելի էր անագնացել: Հ. Մորզընթաուն, մի յայտնի հայու մասին խօսելու ատեն, թալեաթին ասել, որ սխալում էր նրան թշնամի նկատել, նա երբեք հակառակ չէր եղել իրեն:

Թալեաթ, պատասխանել, որ ոչ մէկ Հայ կարող էր մեր բարեկամը լինել, այն բոլոր դէպքերի համար, որ կատարել ենք նրանց հանդէպ: Թալեաթ, Հ. Մորզընթաունից աշխարհի ամէնայ ապշեցուցիչ բանը ուզել «Նիւ Եորք Լայֆ» եւ «Էքզիլիթըլը Լայֆ օֆ Նիւ Եորք» ապահովագրական ընկերութիւնները կարեւոր գործարքներ էին արել հայերի հետ, ասել էր թալեաթ, ապա շարունակելով աւելացրել՝ նրանք իրենց կեանքն էին ապահովագրուած եղել, այն իրենց բարգաւաճութեան ապացոյցն է:

«Ես ուզում էի, ասել էր թալեաթ, որ ինձի օգնէիք ամերիկեան կեանքի ապահովագրութեան ընկերութիւնների Հայ հաճախորդների ցուցակը ունենայի, որոնք գրեթէ բոլորն էլ մահացած են, եւ որ նրանց դրամը պատկանում է մեր երկրին, որի կառավարութիւնը կարիքն ունի այդ դրամներին: Կը ցանկանայի՞ք այդ ծառայութիւնը մատուցել՝ աւելացրել էր թալեաթը:

Հ. Մորզընթաուն կատաղած, թալեաթին պատասխանել՝

«Ինձի մի՛ ապաւինէք, որ ես ձեզի այդ ցանկը կը յայթաթեմ:

Թալեաթ, իր բարեկամների ներկայութեան, ամէնայ շնական արտայայտութեամբ, ասել.

«Ես Հայկական հարցը լուծելու համար երեք ամսուան մէջ աւելի գործ տեսայ, քան Ապտիւլ Համիտ 30 տարուան մէջ»:

Վախեցաւ, վախեցան, այդ «Գորշ Գայլեր»-ի ոհմակի անօրէններ, Հայ վրիժառուների կարմիր գնդակներով յեղուած իրենց պիղծ արիւնով հատուցեցին ցեղին պատճառուած ցաւը, քիչ էր, ինչո՞ւ կանգ առան...:

### ՌԻԵՑԱ-ի Նախագահը Կը Սպառնայ Սուփըր Լիգա Ստեղծող Խուճբերուն



ՌԻԵՑԱ-ի նախագահ Ալեքսանտր Չեֆերին հանդես եկաւ յայտարարութեամբ, ուր մասնաւորապէս ըստած էր. «Այն ֆութպոլիստները, որոնք հանդես կու գան Սուփըր Լիգայի մէջ, իրաւունք չեն ունենար մասնակցելու Եւրոպայի եւ աշխարհի բաժակներուն: Անոնք չեն կրնար ներկայացնել իրենց ազգային հաւաքականները: ՌԻԵՑԱ-ն եւ աշխարհը կը համախմբուին այդ սարսափելի առաջարկին դէմ, որ կ'առաջարկեն մի քանի ֆութպոլային ակումբներ, որ հիմքը ազանութիւնն է»:

Նախապէս յայտնի դարձաւ որ, Ֆութպոլային եւրոպական 12 ակումբներու համաձայնութեան եկած են Սուփըր Լիգա ստեղծելու գաղափարին շուրջ: Հիմնադիրներն են «Ռեալ», «Եուլենտուս», «Մանչեսթըր Եունայթըտ», «Պարսելոնա», «Աթլէթիքօ», «Միլան», «Ինտեր», «Մանչեսթըր Սիթի», «Լիվերփուլ», «Արսենալ», «Չելսի» եւ «Թոթէնհէմ» խումբերը:

Լիգայի ստեղծման դէմ արտայայտուեցան Ֆրանսայի նախագահը եւ Անգլիոյ վարչապետը Մասնակից ակումբները նախնական կը ստանան 89-310 միլիոն եւրօ:

### Անգլիոյ Գաւաթի Եզափակիչին Հասան «Լեսթըր Սիթին» եւ «Չելսին»

«Լեսթըր Սիթին» հասաւ Անգլիոյ գաւաթի եզրափակիչ: Լոնտոնի «Ուեմպլի» մարզադաշտին վրայ տեղի ունեցած կիսաեզրափակիչի խաղին «Լեսթըր Սիթին» մրցեց Սաութհեմփթընի» հետ յաղթանակ տարաւ 1:0 արդիւնքով:

Կիսաեզրափակիչի միւս մրցումին Լոնտոնի «Չելսին» ու «Մանչեսթըր Սիթին» եւ առաւելութեան հասաւ 1:0 արդիւնքով:

Եզրափակիչը տեղի կ'ունենայ Մայիսի 15-ին Լոնտոնի «Ուեմպլի» մարզադաշտին վրայ:

### «Պարսելոնան» Դարձել Սպանիոյ Գաւաթակիր



Գաթալոնական «Պարսելոնան» դարձել տիրացաւ Սպանիոյ գաւաթին: Արքայական ակումբը եզրափակիչ մրցումին խաղցաւ «Աթլէթիքօյի» հետ:

Լիոնել Մեսսիի երկու կոլերը, Անթուան Գրիզմանի եւ Ֆրենքի Դէ Եոնկի կոլերուն շնորհիւ «Պարսելոնան» յաղթեցին խոշոր 4:0 արդիւնքով: 2018 թուականէն ի վեր «Պարսելոնան» առաջին անգամ է որ կը նուաճէ արքայական գաւաթը: Գաթալոնական ակումբի պատմութեան մէջ այս մէկը 31-րդ գաւաթն էր:

### «Մանչեսթըր Եունայթըտ» 8 Միաւոր Ետ Է Առաջատար «Մանչեսթըր Սիթին»

Անգլիոյ առաջնութեան 32-րդ հանգրուանին «Մանչեսթըր Եունայթըտ» իր դաշտին վրայ 3:1 արդիւնքով պարտութեան մատնեց «Պըրնլիին»:

«Մանչեսթըր Եունայթըտ» 66 կէտով կը գրաւէ աղիւսակի երկրորդ դիրքը:

«Մանչեսթըր Սիթին» 74 կէտով կը շարունակէ գլխաւորել աղիւսակը:

### «Մանչեսթըր Սիթի» Եւ «Ռեալ» Հասան Ախոյեաններու Լիգայի Կիսաեզրափակիչ

Ֆութպոլի Ախոյեաններու Լիգայի մրցումներուն զօով կայացան քառորդ եզրափակիչի պատասխան խաղերը:

«Մանչեսթըր Սիթին» հիւրընկալուեցաւ Տորթմոնթի «Պորտսմութհ» կողմէ եւ առաւելութեան հասաւ 1:2 արդիւնքով:

Ախոյեաններու Լիգայի կիսաեզրափակիչ հասան նաեւ «Ռեալը» «Չելսին» եւ Քրանսայի ախոյեան ՊՍՏ-ն:



### «Ռոման» Հասաւ Եւրոպայի Լիգայի Կիսաեզրափակիչ



Իտալական «Ռոման» հասաւ ֆութպոլի Եւրոպայի Լիգայի կիսաեզրափակիչ՝ պարտութեան մատնելով Հոլանտայի «Այաքսին»:

Քառորդ եզրափակիչի պատասխան խաղի առաջին կէսին տարած քայլին առաւելութիւն ունէր «Այաքսը», սակայն ան ունեցած առաւելութիւնը չկարողացաւ վերածել կոլի:

Երկրորդ խաղակէսին փոխանակեցին մէկական կոլ եւ հանդիպումը աւարտեցաւ ոչ-ոքի՝ 1:1 արդիւնքով: Առաջին հանդիպումին «Ռոման» յաղթել էր 2:1 արդիւնքով ու այդպիսով հասաւ կիսաեզրափակիչ:

Հենրիխ Միխիթարեանը «Ռոմաի» հիմնական կազմին մէջ էր եւ փոխարինուեցաւ միայն 87-րդ րոպէին:

Եւրոպայի Լիգայի կիսաեզրափակիչի միւս տեղերը նուաճեցին նաեւ սպանական «Վիլլառեալը», անգլիական «Արսենալը»-ը եւ «Մանչեսթըր Եունայթըտը»:

### Ճափոն Մտադիր Է Ողիմպիական Խաղերը Կազմակերպել Անկախ Համաճարակի Ընթացքէն

Ճափոն մտադիր է Ողիմպիական խաղերը կազմակերպել՝ անկախ համաճարակի ընթացքէն եւ հետեւանքներէն:

Այս մասին յայտարարած է Ճափոնի վարչապետ Եոշիհիդէ Սուգան:

Ան շեշտած է, որ Ողիմպիական եւ խաղերու անցկացումը համաշխարհային միասնականութեան խորհրդանիշ կրնայ դառնալ:

Շատ հաւանաբար խաղերը տեղի ունենան առանց մարզասէրներու ներկայութեան:

Տարի մը յետաձգուելէ ետք խաղերը ծրագրուած են Յուլիսի 23-ին Օգոստոսի 8-ը:



### «Ռոման» Պարտուեցաւ «Թորինոյի» Դէմ

Իտալիոյ ֆութպոլի առաջնութեան 31-րդ հանգրուանին «Ռոման»-մրցակիցի դաշտին վրայ խաղալով «Թորինոյի» հետ պարտուած դուրս եկաւ 3:1 արդիւնքով:

Հենրիխ Միխիթարեանը «Ռոմայի» մեկնարկային կազմին մէջ չէր, սակայն դաշտ մտաւ երկրորդ խաղակէսին:

«Ռոման» աղիւսակին վրայ կը մնայ 7-րդ դիրքի վրայ:

«Միլան»-ը սեփական յարկի տակ ընդունեց «Չենտային» եւ յաղթանակ ձեռք ձգեց 1:0 արդիւնքով:

Այս յաղթանակէն յետոյ «Միլան» մրցաշարային աղիւսակին վրայ երկրորդն է 66 կէտով: Առաջատարը 74 միաւորով «Ինթերն» է, իսկ երեւակը կ'եզրափակէ «Եուլենթուսը»՝ 63 միաւոր: